

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԳԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԿԵՐԱԴԱՐՁԸ

Հոկտեմբեր 24ին թայնդ հրատարակեց Պոլսէն Հե. ուզիր մը որ կը ծանուցանէ թէ Հայոց պատրիարքը հոկտեմբեր 20ին Երլտըզի հետ բացատրութիւններ փոխանակելէ յետոյ պաշտօնին զլուր անցեր է նորէն:

Այս վերադարձը անսպասելի չէր: Առ այժմ ոչ ոք կրնայ գիտնալ պատրիարքին առանձնացմանը եւ նոր որոշումին գաղանկը: Արդէն յայտարարած ենք թէ Օրմանեան պատրիարքին այս վերջի ամիսներու քաղաքականութեան ներքին նպատակը յստակ պարզուած չէ: Ազգին բարձրագոյն ներկայացուցիչը յարաճուն անժողովրդականութեան մը վտանգներուն դէմ հրաժարականի մը գերասանութիւնը ապահովագրութիւն կրնայ համարած ըլլալ: Բայց թերեւս յաջողած է Թիւրքիոյ Հայոց վիճակին բարուքման պայմաններու մասին Երլտըզի հետ համաձայնութեան մը յանգելէ յետոյ վերստանձնել պաշտօն մը որ զինքը ահարկու պատասխանատուութեան ներքեւ պիտի թողու, երբ յուսախաբութիւնը խելայեղ մաշկութեան մէջ հայ ժողովուրդը: Երկու ենթադրութիւններն ալ հաւանականութեան սահմաններուն մէջ առնթքը գտնուելով, աւելի հաճելի է զոնէ պահ մը յուսալ թէ, դաս վարձառութիւններէ յետոյ, Օրմանեան պատրիարք իր պարտականութեանց խորին գիտակցութեամբն է որ նորէն Պատրիարքարան կը մտնէ, նոր թուականի մը բացման առաջագրութեամբ: Հայոց պատրիարքին գէթ առժամակէ հաւատք ներշնչող խոստումները տակաւին բացորոշ չեն հրապարակուած, ուստի և մեր պայմանագրական լաւատեսութեան մէջ հիմակուհիմակ ընդհանուր նկատումներէ առաջնորդուելու հարկադրեալ ենք, պատրանքի մը երկիւղին ազդած վարանոտութեամբը:

Խելացի մարդու մեծահոշակ համբաւը որուն կը պարտի Օրմանեան Մաղաքիա եպիսկոպոս իր բարձր պաշտօնը, գործնական կեանքի մէջ թէեւ տակաւին վաւերացում չստացաւ, բայց աւելի հակամէտ պիտի զրտնուինք փորձառութեան պակասին վերադրել երեք տարուան յուսախաբութեան պատճառները քան թէ մինչեւ

1896 ազգային աչքին հակուրութեանը: Ուրի՞ն Օրմանեան պատրիարքը տաղանդաւոր քաղաքալէտ մը նկատուլու համոզման մէջ զեռ ատեն մըն ալ յարատեւելով, կրնանք նաեւ ընդունիլ թէ պէտք եղած փորձառութիւնը ա՛լ ստացած է: Ու կարծենք թէ ա՛լ ժամանակն է: Իր առանձնացումի անդորրութեան օրերուն պատրիարքը զասակարելով իր փորձառութիւնները անոնցմէ բղխած թելագրութիւններէն իր ընթացքին ուղղութիւնը վերջսկանապէս հորոշապէս ծրագրած պէտք է ըլլայ:

Այդ փորձառութիւնը երեք մասի կը բաժնուի: Պատրիարքը Երլտըզի քաղաքականութիւնը առանց քօղի իր աչքերուն առջեւ անպատուակ պարզուած պէտք է տեսնէ. զինքը շրջապատող խորհրդականներուն նկարալիբը ճշգրտօրէն ճանչցած պէտք է ըլլայ. ազգին ընդհանուր ձգտումը ըմբռնած ըլլալու է:

Հայոց նկատմամբ Երլտըզի խորհուրդները հետզհետէ իրադրուելով, մեր ազգայնութեան բնաջնջումին համար օսմանեան ծրագիրը առանց երկբայութեան հասկցուած է: Բայց քաղաքականութիւնը իր պահանջումները ունի, թերեւս երկրին իշխանութիւնը վերջապէս ըմբռնած ըլլայ այն ծանր վտանգները որոնց կ'ենթարկուի օսմանեան կայսրութիւնը հայկական հալածանքներուն անդադրում շարունակութեամբը. ուստի և նոր ծրագրի մը պէտքը զգայ: Այսպիսի գաղափար մը 1897ի առաջին ամիսները յղացուեցաւ Պոլիս նախարարական շրջանակներու մէջ: Պատրիարքը կրնայ, այս խորհուրդներուն իրբեւ սեղեակ անձնատրութիւն մը, խղճի հանգստութեամբ իր հրաժարականը ետ առնել, ազգին օգտակարապէս ծառայելու համոզմամբ: Դեռ միջեւ հիմա ոչ ոք սակայն Երլտըզի մտադրութիւններուն փոփոխութեան ո՛ր և է մէկ նշանը կը տեսնէ: Բայց պատրիարքը որ պաշտօնին հետ սերտ յարաբերութիւններ ունի իր պաշտօնին բերմամբը, ստուգութիւնը պէտք է հասկցած ըլլայ: Եթէ Օրմանեան պատրիարք այդ յոյսերով կը վերադառնայ իր աթոռը, հիմակուց պէտք է համոզուի թէ օր մը, և յօտաւոր ժամանակի մը մէջ, իրեն պիտի չնհրուի սխալած ըլլալուն յայտնութիւնը:

Օրմանեան պատրիարք կրնայ նաև զգալ թէ Երլտըզի պաշտը պիտի յարատեւէ հայ ազգին դէմ իր շարակաւութեան մէջ, ու կուզայ իրր քաղաքալէտ մը կամ զօ-

րաւար մը կուուիլ թշնամիին դէմ, պաշտպանելու համար ժողովուրդը: Բայց եթէ յաղթուի, արդարացման ո՛րևէ բարութանքի պիտի չկրնայ դիմել: Յետ երեք տարուան պաշտօնավարութեան, Օրմանեան պատրիարքը թշնամիին ուժը և անոր դիմագրաւելու իր կարողութեան չափը ճշգրտապէս կշռած պէտք է ըլլայ. ու եթէ յուսալիւր ընդդիմադրութեան մը զօրութիւնը ինքն իր մէջ չէր զգար, բարեխիղճ պաշտօնէի իր պարտականութիւնն էր նոր պատրիարքի մը ընտրութիւնը դիւրացնել վերջնական հրաժարականով մը: Հիմակ Օրմանեան պատրիարք կուգայ խիզախօրէն կրկին ստանձնել վերին հրամանատարութիւնը, ու օր մը ազգը շատ խստապահանջ երեւնալու իրաւունքը պիտի ունենայ:

Պատրիարքը փորձառութեամբ անշուշտ հիմակ ըմբռնած է թէ իր անժողովրդականութեան աղէտը կը պարտի գլխաւորապէս Դրան պաշտօնատար իր խորհրդականներուն: Առանց անոնց թելադրութեանը պիտի չգործէր Լա Հէ գարնուած անպէտ հեռադրին սխալը: Հայոց պատրիարքները եթէ ոչ միշտ խելացի բայց միշտ բարի և խղճամիտ եկեղեցականներ պիտի հանդիսանային եթէ օսմանեան իշխանութեան հետ իրենց յարաբերութեանց մէջ Դրան պաշտօնատարներու աջակցութիւնը վայելելու հարկէն ազատագրուէին: Ազգէն բղխած, ազգին հետ ապրած, անոր զգացումներուն, անոր դաղափարներուն հաղորդակից, ազգային աւանդութեանց պահպան, այդ եպիսկոպոսները նոյն իսկ իրենց տղիտութեանը մէջ առողջամիտ գտնուած են: Թէ՛ վեհապետեան Յարութիւն թէ՛ Աշըղեան Խորէն պատրիարքները ազգին աչքէն ինկան էֆէնտիներու խօսքին մտիկ ընելով: Վեհապետեանին առաջնորդը Նուրեան էֆէնտին էր, Աշըղեանինը Մաքսուտ Սիմօն պէյը: Ամէն անգամ որ այդ պատրիարքները քանի մը ըոպէ իրենք իրենց խելքովը խօսեցան եւ գործեցին, միշտ իրենց ողջամտութեան ապացոյցը տրուին: Հիմակուան պատրիարքը ո՛չ թէ մէկ էֆէնտի մը այլ էֆէնտիներու խումբի մը խնամակալութեանը ներքեւ գրուած է. ու թէև զարշացած մարդ է, բայց միջով սյրին եւ պարագաններուն ազգեցութեան ներքեւ չընկճուելու համար արտակարգ զօրեղ նկարագրով օժտուած ըլլալու է ազգին բարձրագոյն պաշտօնատարը:

Հայ էֆէնտիները հայ ժողովրդին հետ ո՛չ հոգեկան, ո՛չ մտաւորական հաղորդակցութեան մէջ են: Այս վերջին քսան տարիներու անոնք ազգէն բոլորովին անջատուած կրնան համարուիլ: Միշտ ահ ու դողի մէջ զգուշաւոր կ'ապրին, իրենց հայ ազգայնութիւնը իրենց ոճիւրն է: Կը նմանին յանցաւորներու որոնք մինչեւ մահերնին օստիկանական խիստ հսկողութեան ներքեւ ապրելու դատապարտուած են: Դրան պաշտօնեայ Հայոց այս ծանր կացութիւնը ըմբռնելով պատրիարքը պարտաւոր է իր անկախութիւնը պահել այն բոլոր խնդիրներուն մէջ որոնք ուղղակի կառավարութեան հետ բանակցութեան առարկայ կ'ըլլան:

Պատրիարքը եթէ անսպթաք ուղղութեամբ կ'ուզէ

յառաջանալ պէտք է ուղղակի ժողովրդէն ներշնչուի: Ժողովուրդը տկարութեանց ենթակայ է, անկումներ ունի, բայց ազգային ինքնապահպանութեան բնազդը կ'առաջնորդէ իրեն: Ամէն անգամ որ ժողովրդին առաջնորդները այդ բնազդին ձայնը չեն լսած, շատ սխալած են, ու չարաչար տուժած են իրենք ալ, իրենց հետ ժողովուրդն ալ: Փորձառութիւնը ցոյց տուաւ պատրիարքին թէ ժողովուրդը անտարբեր քնացող մը չէ, այլ արթուն կը հրկէ: Ազգը իր չափաւոր պահանջումներովը առողջ դատողութեան մը ապացոյցը տուաւ. ու պատրիարքին կը մնայ այդ ուժէն օգտուիլ:

* * *

Օրմանեան պատրիարքին թէ՛ հաստատամտութիւնը թէ՛ տկարացումը հաւասարապէս միշտ հաւանական նշկատած ենք: Հիմակ որ խորհրդաւոր պայմաններով աթոռ կը վերագրանայ, չենք ուզեր յոռետես գուշակութիւններ ընել: Պատրիարքը այսօր այնպիսի զօրութիւն մը ունի որ կրնայ իր ազգին ամենամեծ ծառայութիւններ մատուցանել թէ իր կոչումին ամբողջ մեծութիւնը ըմբռնելով ոչիս խորհող, քննող մտքով մը վարել հայ ազգը:

Իսկ առայժմ անցեալին քով կը գնենք միջակէտ մը, զոր կը փափաքենք օր մը վերջակէտ ընել: Արտասահմանի Հայոց պարտականութիւնը պիտի ըլլայ ուշադիր Պոլիս նայիլ եւ դիտել պատրիարքին վերագարձին հետեւանքները: Հիմակ պատրիարքին գէմ ո՛րևէ հակակրական ցոյց օգուտ մը չունենալէ զատ կրնայ շատ վնասներ առաջ բերել. նոյնը պիտի ըսենք նաև համակրանքի օ՛րևէ շուտափոյթ արտայայտութեան համար ալ: Ո՛չ «անկցի» ո՛չ ալ «կեցցէ»: Սպասենք նոր գործերուն:

ԵՐԿՈՒ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԸ

F

Առաջին յօդուածի մը մէջ պարզեցի տեսութիւնները այն լուսաւորչական Հայերուն որոնք համոզուած են թէ Հայութիւնը կը պահպանուի լուսաւորչագաւանութեամբ միայն: Այժմ պիտի ամփոփեմ փաստերը անոնց որոնք հայութիւնը վտանգեալ չեն համարիր երբ ընդունին թէ կաթոլիկ ու աւետարանական Հայերն ալ լուսաւորչականներուն հետ միեւնոյն ազգայնութեան պատկանելու ցեղական ու պատմական անկապտելի իրաւունքը կը վայելեն:

* * *

Պահպանողականներուն հետ ազատականներն ալ համոզուած են թէ երբ տկարանայ ազգութեան հողին, Հայութիւնը այն օրէն վաղահաս մահուան դատապարտեալ մըն է: Բայց մինչ առաջինները այդ հողին միակ օթեանն և անքայլ ապաստանարան կը հռչակեն այն Եկեղեցին զոր սասնըհինգ դարերու պատմութիւնը կառուցած է, յառաջդիմականները կ'ընդարձակեն անոր տիրապետութեան սահմանները և կը տարածեն մինչև կաթողիկոսութիւն, մինչև աւետարանականութիւն: Իսկ յառաջդիմականներու մէկ մասը կը մերժէ ո՛ր և է խտիր դնել քրիստոնէութեան և իսլամութեան միջև անգամ, չուզելով ընդունիլ ո՛ր և է կրօնքի մը դերիշխան ազդեցութիւնը ազգայնութեան սկզբունքին վրայ:

Այս տարբեր տարբեր համոզումներուն մէջ եթէ միակ, բացարձակ ճշմարտութիւն մը փնտռել ուզենք, կրնանք սխալիլ: Քաղաքական հանգամանքները մեզի համար առժամայ և լոկ տեղական ճշմարտութիւններ կը ստեղծեն: Օրինակներով պարզեմ այս իրականութիւնը որ թերեւս առաջնորդէ մեզի դէպի ընդհանուր համաձայնութիւն մը ազգութեան և խղճի ազատութեան խնդիրներուն մէջ, որ այնքան խոռվայոյզ վէճեր յարուցած են ու կը յարուցանեն:

Թիւրքիոյ Հայոց վրայ տիրապետող իսլամ իշխանութիւնը եթէ երկրին իսլամ ցեղերուն հետ մէկտեղ օր մը յանկարծ լուսաւորչական քրիստոնէութիւնը ընդունի, այն բոլակէն այլ եւս Հայաստանեայց եկեղեցին Հայ ցեղը և ազգայնութիւնը պահպանելու անզօր պիտի գտնուի: Քրիստոնէացած իսլամ ցեղերուն հետ Հայերը խօսելով միեւնոյն թրքերէնը, գաւանելով միեւնոյն կրօնքը, բնակելով միեւնոյն հողին վրայ, անխտիր ամուսնանալով լուսաւորչական թրքահիներու հետ պիտի հալին, պիտի ձուլուին թիւրք ցեղին մէջ որ թուով մեր քանի մը պատիկն է, երկրին տերը, հետեւաբար և բոլոր ցեղերուն միացման կեդրոնը: Ու մէկ լեզուով, մէկ կրօնքով, մէկ հայրենիքով այդ բոլոր ցեղերու խառնուրդէն դարերու ընթացքին մէջ նոր ցեղ մը պիտի ծնի, առանց յիշեցնելու նախկին Հայութիւնը:

Ռուսիոյ պետական կրօնքը եթէ կաթողիկոսականներն եղած ըլլար, կամ բողոքականութիւնը, այսօր Ռուսիա ո՛չ կաթողիկոս, ո՛չ աւետարանական Հայեր պիտի գտնուէին: Ռուսական լեզուն արդէն ընդհանրացած է, և պետական կրօնքը գաւանդող ռուսախօս Հայերը, իրենց ազգայնութեան հետ առանց ո՛ր և է յարաբերութեան, այլ եւս պիտի չկրնային յիշել իրենց անօգուտ ազգայնութիւնը:

Կրօնք մը պետութեան մը կամ երկրի մը ժողովուրդներուն մեծամասնութեան կրօնքը չըլլալով հանդերձ կըրնայ ազգութիւնները փճացնել: Այդպէս՝ մեր հայ-հոռոմները: Ըստ այն սկզբունքին թէ կրօնքը տարբեր է, ազգութիւնը տարբեր, պէտք է որ հայ-հոռոմները այնքան հայ համարուին որքան լուսաւորչական, կաթողիկոս, աւետարանական Հայերը: Այս տեսական ճշմարտութիւնը իրականութեան մէջ տարբեր ճշմարտութեան կը վերածուի: Առ-

ն ենք Ակնայ վանքի Զորակի Հայ-հոռոմները: Ասոնք կազմով, նկարագրով, լեզուով, բնութեամբ, աւանդութիւններով բնա նշանախեցի մը չափ տարբերութիւն չունին Ակնցի ուրիշ Հայերէ. միեւնոյն ցեղին և ազգութեան կը պատկանին: Որքան ասեն որ երկիրը կը մնան՝ հայ-հոռոմ են, ինչպէս ուրիշներ հայ-լուսաւորչական, հայ-կաթողիկոս, հայ-աւետարանական. իսկ երբ հայ-հոռոմ ընտանիք մը Պոլիս կուգայ, իրեն սերունդը այլ ևս հայ-հոռոմ չէ, այլ հոռոմ, կամ թէ յոյն: Հայութեան յիշատակը բոլորովին ջնջուած է: Այս իրողութիւնը առանց բացառութեան հաստատուած է: Իսկ հայ-կաթողիկոս, հայ-աւետարանականը միշտ կը մնան հայ: Յայները զատ ազգ մը կը կազմեն, ինչպէս հայերը, առանձին ազգային գաւանդուքով, ազգային լեզուով: Հայը որ յոյնի հետ կ'ամուսնանայ յունական պատկով, իր գաւակները կը մկրտէ յոյն եկեղեցին, զանոնք կը խրկէ յոյն դպրօցները, և իր լեզուն որ երկիրը հայերէն էր, Պոլիս գաւակներուն բերնին մէջ յունարէն կ'ըլլայ, ուստի և հայուն յունականին մէջ ձուլումը կատարեալ է:

Կաթողիկոսութիւնը, աւետարանականութիւնը ու է ազգութեան մը, ցեղի մը կրօնքը չեն, և ոչ ալ իրենց յատուկ տոհմային լեզու մը ունին: Համաձայնակալին են, և ցեղերը իրենց մէջ չեն կրնար լուծել քանի որ իրենց ցեղ չունին: Թիւրքիա, Ռուսաստան, Պարսկաստան կաթողիկոս, աւետարանական հայը կրօնքի մը ազգային լեզուն իրացնելով օր մըն ալ անոր ազգայնութեան մէջ ձուլուելու վտանգէն ազատ է:

Թիւրքիոյ մէջ թրքախօս Հայերը կատարեալ Հայ են, վասն զի քրիստոնէայ են, ըլլան լուսաւորչական թէ կաթողիկոս, Այսպէս կեսարացիները, Էնկիթիւցիները: Ռուսաստանի մէջ ալ ռուսախօս, կամ վրախօս Հայերը կատարելապէս Հայ են: Բայց ո՛չ Թիւրքիա, ո՛չ Ռուսիա Հայ են յունադաւանութիւն ընդունող Հայերը:

Անկախ հայրենիքէ մը զրկուած ժողովուրդները իրենց ազգայնութիւնը միջավայրերու պահանջման համեմատ կ'ապահովեն զանազան պայմաններով որոնք թուաբանական ճշգրտութեամբ միակ բանաձեւի մը մէջ չեն կրնար ամփոփուիլ: Այս պարագային մէջ ալ Թիւրքիոյ և Ռուսիոյ Հայերը իրենց ազգայնութեան պահպանումին համար, ըստ տեղական պահանջման կրնան իրարմէ տարբեր, նաեւ իրարու հակառակող ընկերաբանական վարդապետութիւններ քարոզել առանց միմեանց վրայ փոխադարձ ճնշում բանեցնելու: Թիւրքիոյ հայ յառաջդիմականները երբ ոչ-լուսաւորչադաւան Հայոց ազգայնութեան արդար իրաւունքը բարձրաձայն կը հռչակեն, այն յայտարարութեամբ թէ գաւանդեալ խտրութենէ ազգային խտրութիւն չի ծնիր, տարակոյս չի կայ թէ այս ճշմարտութիւնը ինքնին սահմանափակ կը համարին, կրօնական անխտրութեան ընդհանուր սկզբունքի բոլորազէն իսլամութիւնը լոնչիայն դուրս ձգելով: Այս բացառութիւնը պարզապէս տեղական հանգամանքներու անխուսափելի հետեւանքն է, ուստի և Ռուսիոյ Հայերը պարտաւոր չեն

իւրացնել զայն: Իսլամութիւնը պետական կրօնքն է մեր վրայ տիրապետող օտար ցեղին, և օսմանեան կայսրութիւնը պաշտօնական ու ազգային լեզու մը ունի որ թրքերէնն է. քրիստոնեայ մը պետական կրօնքին հետ ընդունելով պետական լեզուն կը հաշի օտար ցեղին մէջ: Հայ մը, հրեայ մը, յոյն մը երբ կ'իսլամանան միեւնոյն ատեն կը թրքեանան, ինչպէս մեր մէջ քրիստոնէութիւնը սուրացողին համար չեն ըսեր թէ իսլամացաւ, այլ տաճկացաւ, ինչ որ ազգափոխութիւն կը նշանակէ և ոչ թէ կրօնափոխութիւն: Թիւրքիոյ այսօրուան նախարարներուն մէջ նախկին քրիստոնեաներու, հրեաներու թոռներ կան. անոնցմէ ոչ ոք իր ծագումը կը յիշէ սակայն: Հաւաքական կրօնափոխութեանց հետեւանքները միօրինակ չեն: Թիւրքերուն աշխարհակալած այն երկիրներուն մէջ ուր ժողովուրդը ամբողջապէս իսլամ է, առանձին ազգայնութիւնը պահպանուած է, ազգային լեզուով, ու միշտ օտարին դէմ ատելութիւնը ուժղին է, այսպէս Եւմէն: Հոն ուր որ ցեղին մէկ մասը քրիստոնեայ մնացած է, և մէկ մասը իսլամացած, հոն իսլամները ազգայնութեան գաղափարէն հրաժարած են, օրինակ՝ Կրեալն: Կրեաացի իսլամները ցեղով յոյն են, յունարէնն է լեզունին, նոյն իսկ մզկիթին մէջ. և սակայն իրենց արեւակից քրիստոնեայ եղբայրներուն մահացու թշնամիները եղան, ու իրենց հայրենիքին ազատագրութեանը հակառակեցան իրենց բոլոր զօրութեամբը:

Ռուսիոյ մէջ իսլամութիւնը պետութեան եւ գերիշխան ցեղին հետ ո՛ր և է յարաբերութիւն չունենալով, վրտանդաւոր չէ հայ ազգայնութեան: Լուսաւորչական Հայերը կրնան առանց ո՛ր և է վախի իրենց ազգակից համարիչ իսլամացող հայ մը. հոն մահացու թշնամին օրթոտոքութիւնն է, որ ճիշդ ու ճիշդ Թիւրքիոյ իսլամութեան տեղը կը բռնէ Կովկաս: Օրթոտոքս եկեղեցիին դէմ կրօնական՝ այսինքն ազգային՝ ատելութիւնը միշտ վառ պահելով է որ Հայերը ցեղային ինքնապաշտպանութեան ուժի մը կը կրթին ընդդէմ ուսացման վտանգին: Կովկաս երբ հայ մը ուսական դաւանանքը կ'ընդունի, հայ ժողովուրդը կը զարհուրի, կը սարսափի, և կ'ատէ, կ'արհամարհէ հաւատուրացը. հանրային այս զգացումը հայութիւնը պաշտպանող բարոյական ամրակառոյց պատնէշ մըն է գոր եթէ Ռուսիոյ Հայերը մտաբերեն խրամատել յանուն յառաջդիմական բացարձակ ճշմարտութեան մը, փրատակներուն տակ հայութիւնը կը թաղուի:

Կովկասի Հայերը այս մտատանջութեան մէջ են. իրենցմէ շատերը — շնականաբար խօսքս միայն ազնուամիտներուն համար է և ոչ թէ անագնիւ մամուլին — օրթոտոքութեան բացառութիւնը կը շփոթէ ընդհանուր սկզբունքին հետ: Այս շփոթութիւնը գործնականին մէջ յաճախադէպ չէ. Ռուսիոյ Հայոց ամենաստուար մեծամասնութիւնը յարած է յառաջդիմական մամուլին, և կաթովիկ ու աւետարանական Հայերը լուսաւորչականներուն հետ կը մասնակցին հանրային ամէն գործի:

* * *

Կաթովիկութիւնը Արեւմուտքի համար կրօնական լեզու մը ունի՝ լատիներէնը, և միօրինակ կրօնական ծիսակատարութիւն մը: Իսկ Արեւելքի համար՝ անվթար կը պահպանէ հայ ցեղին տոհմային լեզուն և ծէսերը: Լուսաւորչական հայ մը երբ հայ-կաթովիկ ժամ մը մտնէ հոն իր եկեղեցիէն զգալի տարբերութիւն չի տեսներ: Մէկ երկու բառի փոփոխութիւնները աննշմարելի են: Պատարագի մէջ փոխանակ Կաթովիկոսին անուան Պապին յիշատակութիւնը միայն քիչ շատ ուշադրութիւն կրնա գրաւել: Ռուսաստան ալ ձարը և իր ընտանիքը Ամենայն Հայոց Հայրապետէն առաջ կը յիշուին. խորթ հնչում մը որ թիւրքիացի հայուն ականջին շատ խժալուր կը հնչէ: Երոպացիի մը անուան յիշատակութիւնը ու քանի մը աստուածաբանական նրբութիւններ հայ կաթովիկ եկեղեցիին ազգային էութիւնը չեն ջնջեր:

Հայոց եկեղեցին կը պահպանուի ո՛չ թէ աստուածարանութեամբ այլ բանաստեղծութեամբ: Հայ եկեղեցին Հայոց սրտին վրայ կը տիրապետէ և ոչ թէ մտքին, ուստի ո՛չ գիտութիւնը, ո՛չ իմաստասիրութիւնը, ո՛չ ազատախօհութիւնը ո՛ր և է վտանգ չեն սպառնար հայ եկեղեցիին: Այդ բանաստեղծութիւնը, ազգային ոգին խորհրդաւոր ձայնն է որ իր շարականներովը, մեղեդիներովը, աղօթքներովը այս օրուան հայութիւնը կը միացընէ քառսուն դարերու հայութեան: Ու «Այսօր անձառ»ը, «Խորհուրդ խորին»ը, «Ազատութիւն եղբարց մերոց գերիւց»ը ինչպէս Էջմիածնի գմբէթին նոյն եւ Ս. Ղազարու կամարներուն տակ թունդ կը հանեն այն սրտերը որոնց մէջ հայ արիւնը կ'օռայ, վասն զի ամենքս ալ միեւնոյն հայ պատմութեամբը ապրած ենք, կ'ապրինք, ու պիտի ապրինք: Հայ կաթովիկ եկեղեցին հայ ոգին հիւրամերժ տաճարը չէ:

Աւետարանական Հայոց տաճարին մէջ ազգային եկեղեցիին պատկերը չենք գտնել, վասն զի հայ-աւետարանականութիւնը սահմանափակ նպատակով մը հիմնած է իր աղօթարանը, — հին ու նոր կտակարանին մեկնութիւնը լսելու համար: Իսկ իրենց հայ սրտին կարօտը գոհացնելու համար հայ աւետարանականները կը մտնեն հայ ժամը: Հայ լուսաւորչականներն ալ իրենց կրօնասէր մտքին անօթութիւնը յագեցնելու համար կ'երթան ժողովարանը: Կրնանք ըսել թէ հայ-լուսաւորչական և հայ-աւետարանական եկեղեցիները ամբողջութեան մը մասերը կը կազմեն: Հայաստան աւետարանական հայ քարոզիչները ազատ են Հայոց ժամը մտնել և աւետարան քարոզել: Ամերիկա հայ աւետարանական քարոզիչ մը, պատուելի Մարգրեկեանին, Հայաստանեայց Եկեղեցիին վարդապետ ձեռնադրուելուն առթիւ Չայն Հայրենեացը հետեւեալ ուշադրաւ ծանօթութիւնը հաղորդեց.

«Կը յիշեմ որ տարիներ առաջ Ամերիկեան Միսիոնարական Պորտի քարտուղար Մր. Պարթըն, այս եկեղեցւոյ տակի ժողովարանէն մէջ ատենախօսելու ատեն ճշմարիտ ըսաւ թէ՛ Հայաստան զրկուած միսիոնարները ջանալու չեն Հայերը դաւանափոխ ընելու, այլ ա-

նոնց օգնելու են Սուրբ Գիրքը սովորելու և զարկ տալու են անոնց քաղաքակրթութեան ու մտաւոր զարգացման:»

Հայ աւետարանականները իրենց սկզբունքներովը, իրենց զգացումներով հայութեան շերտ բարեկամներն են, և ինչպէս իրենց ցեղային արիւնով նոյնպէս իրենց ազգային հոգւով ամենազուտ հայեր են:

Ահա թէ ինչու Ներսէս մը, Օտեան մը, Արծրունի մը, ընտրելագոյն ներկայացուցիչները հայութեան, չժշնամացան ո՛չ հայ կաթողիկոսութեան, ո՛չ հայ աւետարանականութեան:



Թիւրքիոյ մէջ օտարազգի կաթողիկ եկեղեցականները, աջակցութեամբ հայ կաթողիկ կղերականութեան մէկ մասին, ընդհանրապէս ֆոյլէնցի անունով ճանչցուած, ջանացին օր! օր ընդլայնել անջրպետը որ լուսաւորչական և կաթողիկ Հայերը իրարմէ կը բաժնէր: Այդ կղերը որ հոգեբանական գիտութիւն ունի կը զգար թէ որքան ատեն որ ազգային պատմական ոգին կը տիրէ հայ կաթողիկ եկեղեցիին մէջ, այդ կաթողիկութիւնը միշտ խախուտ է. ուստի աշխատեցաւ այդ ոգիին տկարացմանը: Լուսաւորչականներուն անհեռատեսութիւնը այդ հակահայ ուղղութեան նշանաւոր ծառայութիւններ մատուց: Երկու կողմէն կը բերը զրգուելով դաւանանքի տարբերութիւնը ազգային ատելութեան փոխուեցաւ, ըստ պատմալից վտանգ մը ամբողջ հայութեան համար: Առանց ծանրանալու այդ ատելութեան բոլոր ազդեցութիւնը հետեւանքներուն վրայ, միայն քաղաքական վտանգներու հաւանականութիւնը յիշենք: Կաթողիկ Հայերը որքան որ ալ սակաւաթիւ են բազմաթիւ լուսաւորչականներուն, բայց քրիստոնեայ Եւրոպայի հետ իրենց ունեցած կապերովը ազդեցիկ են կաթողիկ պետութեանց ընդ Նոյն ճշմարտութիւնը նաեւ աւետարանական Հայոց մասին ալ: Եւրոպայի կաթողիկ և բողոքական պետութիւնները միշտ յանուն կրօնքի կը խօսին և կը գործեն Արեւելքի մէջ, Հայ կաթողիկներու և աւետարանականներու թշնամութիւնը զկայ լուսաւորչական Հայերը, որոնք ազգութեան ամենամեծ զանգուածը կը ներկայացնեն, անտարակոյշ շատ աննպաստ տրամադրութիւններ պիտի թելադրէին այդ քրիստոնեայ պետութեանց հայկական դատին դէմ: Դեպքերը ետքէն ցոյց տուին թէ մեծ կարեւորութիւն պէտք է ընծայել կաթողիկ և աւետարանական Հայոց քաղաքական ազդեցութեանը: Երբ 1878ին անգլիական նաւատորմը վնասփոր մտած էր, Ներսէս պատրիարք իր հետն առնելով Էնֆիլէճեան Գրիգոր վարդապետը, որ Հասունեան հերձուածին ատեն յառաջդիմական կաթողիկներուն պետն էր, և Պ. Մատթէոսեանը, ազգապետ աւետարանական Հայոց, պաշտօնապէս այցելութեան գնաց նաւատորմին ընդհանուր հրամանատար Հորնպի ծովակալին: Ու յայտարարեց թէ՛ « Հայերը թէ՛ւ մէջերնին կրօնական բաժանում ունին բայց իբր միեւնոյն ազգութեան զա-

ւակներ մէկ օրտով միացած են իրարու, և միեւնոյն հայրենիքին վիճակը բարւոքել կ'ըզան: Այս ճշմարտութեան ապացոյցն ան է որ ահա ձեր ընդ կը տեսնէք երեք տարբեր դաւանանքներու պետերը որոնք եղբայրաբար միասին եկած են ձեզի ողջունելու:» Տարիներ ետքը երբ վեհապետեան Յարութիւն պատրիարք Հայաստանի ծանր վիճակին համար ազգուապէս բողոքեց Դրան, օսմանեան կառավարութիւնը Հայոց պատրիարքին ձայնը խղզելու համար զիմեց Ազարեան պատրիարքին բարեացակամ միջամտութեանը, ազէկ զխոնալով որ կաթողիկ հոգեւորական պետի մը վկայութիւնը ծանրակշիռ է կաթողիկ պետութեանց առջեւ: Հայրենասէր կաթողիկ Հայեր որոնք Սազըզ-Աղաճիի պատրիարքարանին խորհուրդներուն կը մասնակցէին, այս զաղտուկ դարը զաղտնապէս հաղորդեցին լուսաւորչական Հայոց որպէս զի վտանգին առջեւը առնեն: Ետքէն Իզմիրեան պատրիարք մերժեց ընդունիլ Ազարեան պատրիարքին այցելութիւնը, վասն զի կաթողիկ Հայոց պատրիարքը Հայաստանի վիճակը զոհացուցիչ յայտարարած էր: Իսկ աւետարանական Հայոց ազգապետին՝ Պայալ-Հուլալ փոխադուրձ այցելութեան կը խրկէր իր փոխանորդը՝ Նախորդ Մատթէոս պատրիարքին բանազրսնքը կը քակուէր պաշտօնապէս: Իզմիրեան պատրիարքին ընթացքը երեւան կը բերէ այն քաղաքական կարեւորութիւնը զոր կաթողիկ և աւետարանական Հայերը Եւրոպայի առջեւ կը վայելին:

Ազգային հոգին, ցեղային արիւնը կէս դարէ ի վեր զիմադրեցին լատինական նենգութեանց, ու չափաւորեցին հայկական անհեռատեսութիւնը: Կաթողիկ և աւետարանական Հայոց զրական, գեղարուեստական տաղանդը, ազատասիրական ձգտումը որ տոհմային ծառանգական յատկութեանց ծնունդն են, հայութիւնը փրկեցին եղբայրասպան կրօնական պատերազմի մը աղէտներէն:

Ո՛ր և է անհատ որ մտքին մէջ գրական ստեղծագործութեան ուժը կը զգայ, ու մտաւորական լայն կեանքով ապրելու կը մղուի, պէտք է սիրէ իր ազգը անոր ամբողջութեանը մէջ: Հայ գրագէտին ներշնչարանը իր ցեղն է. իր հոգին ցոյցացումն է ժողովրդին ու հայրենիքին հոգիին զոր հազարաւոր տարիները կազմած են: Հայ գրագէտը հայութիւնը կը սիրէ անոր բազմաստուածեան ու միաստուածեան կրօնքներովը, հին ու նոր լեզուովը, պատմական առասպելներովն ու ճշմարտութիւններովը, աւերակներովն ու օրուան ապրած կեանքովը, ամէն բանումններովը, ամէն գեղեցկութիւններովը, ամէն տրգեղութիւններովը: Հայ գրագէտը կարող չէ լուսաւորչական, կաթողիկ, աւետարանական ըլլալ, բառին անձուկ իմաստովը: Հայ գրագէտը եթէ կրօնասէր հաւատացեալ մըն է, ունի իր անհատական խիղճը որ իր Աստուծոյն հետ իր յարաբերութեանց ուղղիչն է: Ամէն հայ կը յարգէ այդ խիղճը իբր սուրբ և նուիրական իրաւունք մը, բայց միեւնոյն ատեն գրագէտը հանրային խիղճ մըն ալ ունի, առանց որու ինք ո՛ր և է կոչոււմ չի կրնար ունենալ: Գրագէտը այդ հանրային լայն խղճովը հոլաթեւ կը սաւառնի

ամբողջ ազգութեան վրայ. ո՛չ արտօրուան Հայն է, ո՛չ երկուան, ո՛չ վաղուան, այլ ամէն ժամանակի. ցեղին անմահութեան մարմնացումն է: Ոչ-լուսաւորչական հայ գրագէտը այս ընդհանուր օրէնքին բացառութիւնը չէր կրնար ըլլալ, ապա թէ ոչ սիրահարական տաղերէ զատ բան մը չէր կրնար տրտադրել:

Ոչ-լուսաւորչականներն ալ հայութեան այդ զուտ, անարատ ազգային գրագէտները տուին: Մեր տոհմային մատենագրութիւնը իր շատ բարձր ու հեղինակաւոր ներկայացուցիչները ունեցաւ ոչ միայն աշխարհական կաթողիկոսներու մէջ, որոնք կրնան ի հարկին պարգապէս նշանակուիլ համարուիլ ծննդեան պատճառաւ, այլ նոյն իսկ կրօնաւոր վանականներու մէջ որոնց ջերմ ու անկեղծ հաւատքը ո՛ր և է կասկածանքէ վեր է: Այսպէս յիշեցնենք միայն Ռազրատունին ու Ալիշանը: Առաջինը ընդհանուր հայութեան դիրամատչելի չէ եղած. իր մեծ գործը՝ Հայկ Գիշացազը՝ իր բարձր ու վսեմ գրաբարին պատճառաւ սահմանափակ շրջանակի մը մէջ կըրնայ կարդացուիլ: Ընթերցողներու թիւը սակայն հեղինակութեան մը ներքին արժանիքին գնահատումը չէ: Բազրատունին հայ մատենագրութեան ու պատմութեան ուսումնասիրութեամբը աղէկ ճանչցած է իր ցեղին նկարագիրը, ու խորապէս զգացած է անոր հոգին: Սքանչացուած կը սիրէ իր հայրենիքը, իր ցեղը որոնց գեղեցկութիւնները և առաքինութիւնները խանդաղատանքի, գուրգուրանքի հիացմամբ գեղափայլ կը մարմնացնէ իր դիտարկման միտքը միացած է շատ փափուկ սրտի մը որուն կենսատու արիւնը հայութեան սէրն է, և առանց զգացնելու այդ սիրովը կ'ողողէ Հայկը կարդացող Հայը: Ալիշան մեծ բանաստեղծն է ո՛չ թէ միայն Հայրոշմիին, Տխրոշմիին, Յռչիկներուն մէջ, այլ նաեւ իր հնախօսութեանցը մէջ: Գրչով պարզ պեղիչ մը չէ աւերակներու, ինչպէս ուրիշներ բաժնով: Հնախոյզները որ հոգը կը փորեն ու անցեալին յիշատակները երեւան կը բերեն, մտքի բազմատեսակ կարողութիւններով օժտուած կամքի տէր մարդիկ են. բայց իրենց գտածները երբ թանգարանի մը մէջ կը շարուին, ա՛յլ իրենք կը մոռցուին, վասն զի բան մը չեն ստեղծած: Մատենագրութեամբ հնախոյզն ալ երբ փնտրուտուքներ կ'ընէ, տեղագրութիւններ կը ճշդէ, ցուցակագրութիւններ կը կազմէ, թուականներ կը ճշգրտէ, այդ պատմական գիտութեան յառաջացմանը մեծ ծառայութիւններ կը մատուցանէ իր համբերատար աշխատասիրութեամբը: Եւ ուրիշներ կուզան իր գործերը սրբազրել, հաստատել, հերքել, կատարելագործել, ու ամենքն ալ իրար կը մոռցնեն ժողովրդին յիշողութեանը մէջ: Ալիշան արտակարգ արժանիք մը պիտի չունենար, և հայ ժողովրդին վրայ առանց մեծ ազդեցութեան պիտի մնար եթէ պարզ գրչով պեղիչ մը եղած ըլլար: Բայց այդ գրչին տակ բարերը լեզու կ'ելլեն, աւերակները կը հեծեն, յիսուն դարերու հայութեան Հոգին մեհնաններու, տաճարներու, ձորերու մէջ, լեռներու վրայ կը

շրջագայի, սրտից կը խօսի, հոգից թունդ կը հանէ. ու Հայը անոր ձայնէն կը տխրի, կը բորբոքի, կը յուսահատի, կը խանդավառի, կը հրճուի: Կը զգաս թէ ամբողջ ցեղիդ տիրութիւնները, երազանքները, վշտերը, ուրախութիւնները, յոյսերը, հաւատքը խտացած են մտքի մը, սրտի մը մէջ որ նոյն ինքն ազգութեան հոգին կը թարգմանէ:

Ընդհանուր գրական պատմութիւն մը չէ որ կը գրեմ, ուստի ինչպէս եկեղեցական նոյն և աշխարհական հայ կաթողիկ գրագէտներուն անունները մէկիկ մէկիկ արձանագրելու պէտք չեմ տեսներ: Կը յիշեցնեմ միայն Պէշիկ-թաշլեանը, ամէնուն պարագլուխը, ազնիւ սրտով, նրբացած ճաշակով, գեղեցիկ աաղանդով օժտուած բանաստեղծը որ հայ ազգայնութեան մեծ դաստիարակներէն մէկը եղաւ:

Կարելի չէր որ լուսաւորչական Հայերը ատէին, պարգապէս գաւանանքի մը տարբերութեանը պատճառաւ, այն գրական մեծ տաղանդները որոնց մտքին ու սրտին հզօր ազդեցութեանը ներքեւ կը զարգանային: Միրելով և յարգելով այդ մեծ անձնաւորութիւնները, լուսաւորչական Հայերը յարգանք պիտի զգային և այն հայ հասարակութեան համար որ էլ միածնէն պաշտօնական կերպով անշատուած կը մնար, բայց իր տոհմային յատկութիւնները կը պահպանէր ամբողջապէս: Այդ յարգանքը կամաց կամաց կը չափաւորէր, յետոյ կը տկարացնէր — մինչեւ որ օր մը անհետացնէ, — կրօնական ատելութիւնը:

Յետագարձ ակնարկով մը կրնանք նաեւ յիշեցնել թէ Միլիթար Աբրահան իր միաբանութիւնը հիմնած օրէն մատենագրութիւնը Հայոց միաբանութեան կուսանը եղաւ: Թէ հայրենի երկրին մէջ, թէ գաղթականութեան մէջ հայ ժողովուրդը միշտ պատկառանքի մեծարանքով յարգեց Միլիթարեանները, համոզուած ըլլալով որ ազգային պահպանման ամենազօր սատարներն են: Ղազէզ Ամիրան երբ կաթողիկ Հայերը կը հալածէր, միեւնոյն ատեն եկեղեցական զգեստներ վերնախիւսի վանքին կը նուիրէր: Ու Տիգրան, Տատեան իրարու հետ կը միանային Մ. Ղազարու կեղրոնը որպէս զի նպաստեն հայ լեզուին, հայ գրականութեան, հայ պատմութեան բարգաւաճմանը, և հայ մտքին կրթութեանը:

Այդ գրականութիւնն էր նորէն որ Օտեան մը, Պէշիկ-թաշլեան մը կը միացնէր իրարու: Այդ երկու տաղանդներուն մտաւորական սերտ մտերմութիւնը նոր սերունդի մը ազգային միաբանութեան խորհրդանշան պատկերն էր, իր բայերգը՝ « Ի բիւր ձայնից »:

Գրականութենէ զուրս ո՛չ երաժշտութեան, ո՛չ գեղարուեստի մէջ կաթողիկ Հայերը ազգային հոգի ցուցուցին. բայց ո՛չ ալ լուսաւորչական Հայերը: Յանցանքը կրօնքինը չէր այլ բաղաբական կացութեան: Եթէ Չուհաճեան « Լէպլէպիճի Հօրհօր » ուղը մեծահոյակ եղաւ, բայց նոյն երաժշտապետը Արշակ Բի օրերան ստեղծեց: Բայց թէ՛ նկարչութեան, թէ՛ ճարտարապետութեան մէջ հայ կաթողիկոսները իրենց տոհմային յատկութիւնները փայլեցուցին օտարներուն իսկ պատասարկելով, ինչպէս ը-

րին Պաշտանները թիրքերուն: Ու Աղամբանը Երուպայի
էն մեծ արուեստագետներուն հաւասարելով, նոյն իսկ
օտար հասարակութեան մը — ուսականին վկայու-
թեամբը, Ռուսիոյ մէջ ցոյց տուաւ թէ Հայ ցեղը միայն
առեւտուրի ժողովուրդ մը չէ, ու ինչպէս զինուորական
մեծ տաղանդներ կը ծնի, կը ծնի նաեւ մեծ արուեստա-
գէտներ:



Կաթովիկ Հայերը իրենց հանրային կեանքին մէջ
միշտ աշխատեցան որչափ հնար է չհեռանալ Ազգային Ե-
կեղեցիին աւանդութիւններէն: Մինչ քոլէճցի եկեղեցա-
կաններու խումբը մեծամեծ ջանքեր կ'ընէր հին յիշա-
տակներու անհետացմամբ ազգային ողին սպաննելու,
ժողովուրդը, առաջնորդութեամբ զարգացեալ դասակար-
գին, կ'ըմբոստանար: Եկեղեցական զանազան խումբերէն
Վենետիկի Միթիթարեանները շատ սիրուեցան, ու այդ
բացառիկ սէրը կաթովիկ Հայոց հայասէր ազգասիրութեան
ապացոյցն էր: Վիեննայի Միթիթարեանները աւելի գի-
տական մշակման ետեւէ ըլլալով ազգային սիրտը չէին
կրցած զրուել: Բայց ահա հետզհետէ անոնք ալ սկսած
են օրէ օր աւելի զրուել թէ՛ կաթովիկ և թէ՛ ո'չ կաթով-
իկ Հայոց համակրանքն ու յարգանքը: Այսօրեան եւ
պիսկոպոսին արքայութիւնը ամենաբարեբար ազգեցու-
թիւն մը ունեցաւ: «Հանդէս Ամսօրեայ»-ն ազգային ամե-
նալուրջ հրատարակութիւն մըն է, և աւելի քան տասը
տարի է Վիեննայի տպարանէն ազգային հրատարակու-
թիւնները կը բազմանան:

Երկու Միթարեանութիւնները իրենց գարոցներովը հայ
լեզուն կաթովիկ Հայոց մէջ տարածելու, մշակել տալու
հզօրապէս նպաստեցին: Քոլէճիկներուն զլխաւոր մէկ
ջանքն էր հայ լեզուն մոռցնել տալ: Եկեղեցական արա-
րողութեանց գրաբարը այն նշանակութիւնը պիտի ունե-
նար, ինչ որ լատիներէնը երուպացիներուն համար, իսկ
հայ կաթովիկութեան ազգային լեզուն պիտի ըլլար թրքե-
րէնը: Սակայն յաղթուեցան: Սազը-Աղածի պատրիար-
քանը զր Քոլէճիկներուն ազգեցութեան տակն էր, հասկը-
ցաւ թէ հայ լեզուն զէմ՝ մաքառումով հետզհետէ իր հե-
ղինակութիւնը պիտի կորսնցնէր կաթովիկ Հայոց վրայ:
Ազարեան պատրիարք Լուսաւորչեան մեծ վարժարանին
յէջ ո'չ միայն հայ լեզուն ուսումը պարտաւորիչ ըրաւ,
այլ ջանաց հայերէնի նշանակութիւնը բարձր պահել:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԻՆ ԻՆՔՆՕԳՆՈՒԹԻՒՆԸ

Այս տարի օգոստոս 14ին Ամերիկա հիմնուեցաւ
Հայ Հրատարակչական ընկերութիւն մը, որուն նպա-
տակը բացատրող եւ կանոնադիրը պարունակող ծրագիրը
ստացանք: Առանց վարանելու կ'ըսենք թէ ամբողջ հայ
ազգը սիրովիչ զոհունակութեամբ պիտի ամբապնդի տե-
ղեկանալով այդ նպատակին, որ ահա .

«Ամերիկայի հայ հրատարակչական ընկերութեան
նպատակն է մամուլի միջոցաւ Հայ գաղութիս մտաւոր
զարգացմանը նպաստել, եւ ջանալ զերծ պահել զայն
անբարոյականացուցիչ եւ ազգութենէ օտարացուցիչ ամէն
ազգեցութենէ: Հետեւաբար ընկերութեանս ուղղութիւնը
պիտի լինի շատագոյլ կենալ Քրիստոնէական կրօնի և
բարոյականութեան, հայ ազգի եւ հայրենեաց սիրոյ ար-
ժարման, հայրենեաց փրկութեան գաղափարի ուսուցում,
սիրութեան, ընտանեկան և ընկերական կեանքի ազ-
նուացման, և նոյն ատեն շինիչ և լուսամիտ գաղափարաց
տարածման, որք կը բարձրացնեն հայ գաղթականու-
թեանս զիրքը բազաբախիրթ աշխարհի մակարդակին, և
կը կապեն Հայը իւր հայրենիքի հետ:»

Այս նպատակը իրագործելու համար ընկերութիւնը
հիմակ կը հրատարակէ «Չայն հայրենեաց» շաբաթա-
թերթը, և հետզհետէ պիտի տպագրէ թարգմանուած կամ
հեղինակուած տետրակներ, զրքեր:



Ամերիկայի հայ գաղթականութիւնը արձանապարհար
մեծամասնութեամբ կը բաղկանայ գործաւորներէ: Հայ մը
չկրնար առանց խորազգած յուզումի տեսնել այդ ժողո-
վուրդը որ իր երկրէն հեռու, պանդուխտ, տառապեալ,
աշխատանքի ներքեւ շարաշար ընկճուած, և սակայն միշտ
խաւեական ապաղայի մը ակնկառոյց՝ դէպի հօն կը դիմէ,
իւր հոգեկան կորուլին մէջ ըսպէ մը իսկ չթուլանալով, և
աղէտները որքան աւելի ծանր են, իր ազգային նկարա-
զիրը այնքան աւելի կ'ամբանայ:

Օր չ'անցնիր որ հայ ժողովուրդին ականջներուն չի հըն-
չուի ճշմարտութիւն մը՝ «Ժողովուրդ, զո'ն ինքզինքդ
պիտի փրկես. յոյսդ ուրիշին վրայ մի՛ դներ:» Բայց ժողո-
վուրդ մը ի'նչպէս պիտի փնկէ ինքզինքը: Այս հարցումին
զործնական պատասխան մը գտնարութեամբ կը տրուի:
Ժողովուրդը մէկ զլիով մարմին մը չէ որ ինքզինքը ամ-
փոփելով խորհի, մտրակէ, գործէ: Ժողովուրդը ընդհու-
րացնէ. ինչպէս ամենքը մէկտեղ բերելով դէպի փրկու-
թիւն առաջնորդել կարելի է: Ամերիկայի Հայոց Հրատա-
րակչական ընկերութիւնը այս կ'ընտան խնդրին լուծմանը
նպաստելու կ'աշխատի: Երբ շատ տարիներու բարգաւ-
թիւնները, վիճաբանութիւնները, փորձառութիւնը, ժողո-

վրդին մտքին մէջ կարգ մը գաղափարներ վերջնապէս կը զետեղին, ան ատեն այդ ժողովրդին ծոցէն կը ծնի գործադիր հեղինակութիւն մը որ կը ջանայ արդիւնաւորել, պտղաբեր ընել ժողովրդին մտածութիւնները: Հրատարակչական ընկերութեան նպատակը և անոր հասնելու ամփոփ ծրագիրը վերլուծելով կը տեսնենք թէ Ամերիկայի հայ հասարակութիւնը ինքնօգնութեան սկզբունքը գործադրելու ողջամիտ խորհուրդներ յղացած է. անոնց իրականացմամբ ժողովուրդը ղէպի փրկութիւն պիտի յառաջացնէ:

Ամբողջ ծրագիր մըն է, և յայտնութիւն մը, նպատակին հետեւեալ տրամադրութիւնը. « Հայրենեաց փրկութեան գաղափարի ուսումնասիրութիւն: » Ժողովուրդը ուրեմն աղէկ ըմբռնած է թէ հայրենիք մը չի կրնար փրկուիլ քանի մը անհատներու ջանքերովը, զոհողութիւններովը և դիպուածին օգնութեամբը: Եւ այն պայմանները որոնք իրարու թու գալով կ'ազատագրեն ստրկացած ժողովուրդ մը. որքան ատեն որ հայ ժողովուրդը իր յոյսը մի միայն պատրիարքներու, փոքրածի յեղափոխական անձնաւորութիւններու, զիւանադիտական բարեացակամութեան վրայ դնէ և ինք միայն ակնդէտ սպասէ որ իր ազա տութիւնը իրեն շնորհուի, հայ ժողովուրդը միշտ թշուառ, հալածեալ, գիրի պիտի մնայ: Իսկ երբ ինքը իր ահագին կոյտովը կը շարժի, այն ատեն թշնամին կը սարսի: Բաւական է որ ամէն հայ « Հայրենեաց փրկութեան գաղափարին » ուսումնասիրութիւնը խղճիմտօք կատարէ — ու խղճամիտ ըլլալու համար ո'չ աղքատ, ո'չ հարուստ, ո'չ տղէտ, ո'չ ուսեալ ըլլալու պէտք կայ — և ինչքան հընար է ջանայ լրջախոհութեամբ մտածել. հաւաքական ու նիւթական ուժերը որոնք հաստատ համոզումներու կոթնած ըլլալով ոչ՝ ձախորդութեան առջեւ կ'ընկրկին, և ո'չ ալ սխալումներէ կը յուսահատին:

Հրատարակչական ընկերութիւնը ուրիշ մեծ ճշմարտութիւն մըն ալ քաջ ըմբռնած է՝ բարոյականութեան օգտակարութիւնը: Առանց բարոյականութեան էն հզօր ազդերը կը տկարանան, կը կործանին. իսկ արդէն քայքայուածները ստոյգ մահուան մը պէտք է սպասեն: Կիսամեծ ժողովուրդները բարոյականութեան կենսատու զօրութեամբ կը կազադուրին, կը զօրանան, և կը փրկուին: Հայուն համար բարոյականի ներշնչարանը քրիստոնէական կրօնքն է: Հայութիւնը կը կազմուի պարզ, աշխատող, մասամբ չափաւոր ուսում ստացած, մասամբ բնաւ ուսում չ'ստացած ահագին ստուար մեծամասնութենէ մը: Ամէն երկիրներու մէջ ալ ժողովուրդը ո'չ գիտուն է, ո'չ ալ բարձր մտքով մը օժտուած, պարզ ժողովուրդը իր սրտովը կը բարոյականանայ, իսկ իր միտքն ալ քանի մը պարզ ճշմարտութիւններով կը ղեկավարի: Հայուն համար պատմական կրօնքը քրիստոնէութիւնն է, որուն գերազոյն ազդեցութեանը ներքեւ պահպանած է իր գոյութիւնը, հակառակ րազմադարեան աղէտներու: Քրիստոնէական զգացումին տկարացմամբն է որ պարզական Հայուն բարոյականն ալ կը տկարանայ: Այդ զգացումը

հզօրացնելու աշխատողները իրական բարիքներ կը մատուցանեն հայ ազգին:

Ընկերութիւնը նաեւ զգացած է թէ քաղաքակիրթ աշխարհին համակրանքը Հայոց գրաւելու դիտարկ պայմաններէն մէկն է հայ գաղթականութեանց վերքը բարձր պահել օտար երկիրներու մէջ: Մէկ երկու տարիէ որ Ամերիկայի գատարաններուն առջեւ ամբաստանուող Հայոց թիւը կ'աւելնայ: Դրադրութիւն մը որ պէտք չէր տարօրինակ երեւոյթ մը համարել: Ամէն ազգի մէջ շարագործներ, եղեռնագործներ պակաս չեն: Բաղդատմամբ ուրիշ ազգերու Հայ գատարաբաններու թիւը Ամերիկայի մէջ նուազ է. և սակայն Հայերուն յանցապարտութիւնը շատ աչքի կը զարնէ: Ասոր գիտաւոր մէկ պատճառը Պոլսոյ մէջ Հայաստանի Հայոց վայելած դարաւոր բարի համբան է: Կ. Պոլսոյ ո'չ միայն Հայ այլ և միջազգային վաճառականութեան, սեղանաւորութեան մէջ Հայաստանցի պանդուխտները ճանչցուած են բարոյական մտատիպարներ: Ո'չ արբեցող են, ո'չ գող, ո'չ մարդասպան, ո'չ ո' և է անբարոյականութեամբ վարակեալ: Այս բարի համբաւը աշխարհիս ամէն կողմը տարածուած է: Եւրոպայի այդ ցեղային առաքինութեանց, շատ եւրոպացիներ ու ամերիկացիներ համակրած են հայ ազգին, առանց անոր պատմութիւնը գիտնալու իսկ: Հայ անունը և բարոյական բանը իրարու հոմանիշ կը համարին: Ինչքան օտարազգիներ յայտարարած են որ՝ եթէ Հայը ստրկութեան մէջ այսքան ազնիւ է, արդեօք ինչ առաքինութեանց ընդունակ պեաի ըլլայ ազատութեամբ: Մեր համայնքներուն պարտական ենք հայ ազգին վայելած այս համարումը: Պոլիս ժամանակաւ — 96ի ղէպերէն առաջ — մօտ 40 հազար հայ պանդուխտ կար. եթէ ասոնց մէջէն հարիւրի չափ գողեր, աւազակներ, մարդասպաններ գտնուէին, բընաւ պատճառ մը պիտի չըլլար, ըստ ուղիղ բանակարանութեան, ապշիլ զարմանալ: Բայց երբ գող համալ մը գտնուէր, Պոլսոյ ամբողջ գործի աշխարհը գայթակղած, սարսափահար կը մտար, բոլոր Հայերը կը տխրէին. ու այնպիսի դժբաղդութիւն մը տարօրինակ բացառութիւն եղած է: Անդին 40,000 յոյնին կամ քիւտերին մէջէն 20 հազար եղեռնագործ գտնուին, ոչ ոք ուշադրութիւն կ'ընէ. շատ բնական երեւոյթ մը կը համարուի: Ազամանդին վրայ պզտիկ աննշմարելի բիծ մը անոր արժէքը կը կոտրէ: Ազգին այս բարի համբաւը օտար երկիրներ ալ տարածուած ըլլալով, կը կարծուի թէ Հայերը « մարմնատեսիլ քերովբէ » ներ ըլլալու են, ու երբ անոնցմէ ոմանք իր անբարոյակացեալներ երեւան կուզան, գայթակղութիւնը մեծ կ'ըլլայ: Եւրոպայի մէջ, մասնաւորապէս Լոնտոն, փախստական Հայերէ ոմանց վատթար վարժուողը շարաշար վնասեց Հայոց վարկին: Անշուշտ Ամերիկայի Հայերն ալ իրենցմէ ոմանց անբարոյական գործերէն ծանր հարուածներ կը կրեն և կը տուժեն: Ողբ սւ գանգատ ո' և է օգուտ չունին աղէտներու զարմանին համար. շարիքին առջեւ առնելու գործնական միջոցներ պէտք է փնտռել: Հրատարակչական ընկերութիւնը աշխատելով « ընտա

նեկան և ընկերական կեանքի ազնուացման» շատ նպատակայարմար միջոց մը անօրինաձ կ'ըլլան շարքին գէտ: Ընտանիքի մը, ընկերութեան մը բարոյական մակարդակը երբ բարձր կը մնայ, անոնց իւրաքանչիւր անդամը կը ջանայ ուրիշներէն ցած չմնալ: ամբողջը կը պահպանէ իր ամէն մէկ մասը որ քիչ շատ տկարանալու կը հակի: Պոլսոյ հայ պանդուխտներուն հաւաքական և աւանդական առաքինութիւնը կը սանձահարէր մոլութեան բնազդով ծնածներն իսկ:

Պիտի փափաքէինք որ հրատարակչական ընկերութիւնը իր գործունէութեան մէջ չմոռնար և առողջապահութիւնը: Սրտով ազնիւ, մտքով ուժեղ հայութիւն մը պատրաստելու աշխատողները պէտք չէ մոռնան և մարմինն ալ: Առողջ մարմիններ պէտք են որպէսզի տոկոսնութեամբ դիմադրուեն կուրի: առողջ մարմիններ պէտք են որ հայութիւնը կարծի սերունդներ ունենայ: Քանի հազարներով կը հալին, կը մաշին, կը փճանան հայերը մաքուր չ'մնալով: Առողջապահութեան աւետատարան մըն ալ ունենալու ենք: առողջապահութիւնը անհատներու, ազգերու բարոյացման ամենազօր սատարըն է: Մոլութիւնները հաւատարապէս թէ բարոյականը կ'ապականեն, թէ արիւնը: Արեւոյնութիւնը, շատակերութիւնը, մարմնական անբարոյականութիւնը, բարկութիւնը, ծուլութիւնը որքան ազեղաբեր են մարդու մտքին ու հոգիին այնքան ալ մահացու թշնամիներ են մարմինն:

Արտասահմանի Հայերուն ամենամեծ պարտականութիւնն է իրենց աշակցութիւնը նուիրել Ամերիկայի հրատարակչական ընկերութեան բարգաւաճմանը: Այսօր Ամերիկա ամենահոծ թուով պանդուխտներ կը դանդաղան. ասոնց հայրենի երկրէն բոլորովին բաժնուած զաղթականներ չեն: առժամայ տարազեղներ են որ խումբ խումբ կը վերադառնան իրենց երկրներուն տակ, մինչ ուրիշներ ալ ճամբայ կ'ելլեն կուրան անոնց տեղը բռնելու: ու աս այսպէս պիտի շարունակուի մինչև որ մեր երկիրը իր դաւակները պահելու բարիքներով սօժուի: Քանի որ Հայաստանցիներուն համար անխուսափելի հարկ մըն է պանդուխտութիւնը, լաւագոյն է որ երթան այնպիսի երկիր մը որ ատեն մը իբր ազատ մարդ ապրին և զարգացած զաղափարներով վերադառնան: Ինչ որ սորովին Ամերիկա զայն պիտի սորվեցնեն երկիրը իրենցներուն: Ինչ որ ստանան զայն պիտի փոխադրեն հայրենիք: Չէնք լսած թէ Հայաստանի ս'ըբան դիւրերու բազմազարեան մաքուր արիւնը ապականեր է վարակուելով Պոլսէն վերադարձող տարարազ խեղճերու ստացած զարշիլի ախտերէն: Խտիր չենք գնեք բարոյական ու մարմնական ապականութեանց միջեւ: Ամէն Հայ թող մտածէ որ իր լուսման կրնայ պանդուխտ մը անկուձէ ազատել, ընտանիք մը փրկել, ու թերեւս դիւր մը:

Երբեմն Պոլսեցիները պանդուխտ Հայոց կարգալարել կը սորվեցնէին, զոհելով իրենց կիրակիները. հի-

մակ Ամերիկայի պանդուխտ Հայերը իրենց իրենց պիտի օգնեն. արտասահմանի Հայերը ծանր բեռ մը չունին, բայց թէ օգնութեան աջ մը կարկառու:

Հրատարակչական ընկերութեան տետրակներէն, զրքերէն անոնք որ բարոյական, քրիստոնէական, առողջապահական նիւթերու վրայ կը խօսին անշուշտ դիւրութեամբ երկիր պիտի մանեն, որով Հայրենիքին մատուցած իրենց ծառայութիւնը կրկնակի պիտի ըլլայ: Ու երբ Հայ մը մտածէ թէ տասը երեսը բաղկացած տետրակ մը սրուն տպագրութեան ինք նպաստած է իր լուսմանը, պիտի միթմարէ հազարաւոր զբաղգներ, պիտի արգիլէ հոգեկան անկումներ, պիտի փրկէ շատ կեանքեր, արդիօք այդ Հայը բոպէ մը պիտի վարանի իր լուսման ձգել Հրատարակչական ընկերութեան գանձարանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԹԻՒՆԸ

Իր նախորդին նման 19րդ դարն ալ արդիօք եւրոպական ահեղ պատերազմներով պիտի վերջանայ: Միջազգային մասուլը եւ դիւանագիտութիւնը այս հարցումին վճռական պատասխան մը տալու անկարող են: Հարաւային Ափրիկէի մէջ ափ մը քաջարի Պոլսեցիներու ինքնապաշտպանութիւնը ընդգէտ Անգլիացիներուն, ամբողջ Եւրոպան ամենամեծ վտանգներու կը մասնէ: Հոկտեմբեր 30ին իբր 2,000 զօրքէ բաղկացած անգլիական երկու գունդ անձնատուր եղան թշնամիին: Այս ձախորդութեան լուրը ամբողջ Եւրոպան ու Ամերիկան տակնուվրայ ըրաւ: Պօէրներուն ընդգիծալուութիւնը սրբան երկար տեւէ խաղաղութեան վտանգներն ալ այնքան աւելի հաւանական կ'երեւին: Հոսմէն «Տէյլի ֆրոնթիք»ի հոկտեմբեր 31 թուականով զարնուած հետեւել հեռագիրը կրնայ Եւրոպայի ընդհանուր մտատանջութեան արտայայտութիւնը նկատուիլ: «Դիւանագէտ մը այս առտու ինձի յայտարարեց թէ, կ'ըսէ անգլիական թղթակիցը, Եւրոպայի մէջ ամէն մարդ, նոյն իսկ Պօէրներու բարեկամները, պէտք է այս վերջիններուն յաղթութեանց լուրերը սրտագոզով իմանան, վտանգի փրանսա եւ Ռուսիա պիտի փորձուին օգտուիլ այս պարագայէն, եւ ընդհանուր պատերազմ կրնայ ծագիլ: Խաղաղութեան պահպանման բոլոր բարեկամները, աւելցուց այս անձնատուրութիւնը, պէտք է Պօէրներուն արագափոյթ պարտութեանը փափաքին»:

Անգլիացիներուն սիրտը շատ հանգիստ չէ: Կը վախնան որ եթէ մինչեւ անգամ յաջողին Պօէրները կայմակի արագութեամբ ջախջախել, զարձեւալ Ռուսիա եւ Ֆրանս-

սա զիրենք հանդարտ պիտի չձգեն: Երկու դաշնա-
կիցները պիտի ուզեն որ Հարաւային Ափրիկէի մէջ
Անգլիոյ ըրած գրաւումներուն փոխարէն, իրենք ալ աս-
ղին ուրիշ առաւելութիւններ ձեռք բերեն: Թէեւ տակա-
ւին որոշապէս չի գիտցուիր թէ ի՞նչ պիտի ըլլան եր-
կու պետութեանց պահանջումները, բայց հաւանական
կ'երեւի որ Ֆրանսա պիտի ուզէ զրաւել Մարոքը, ինչ-
պէս երբեմն ալ Թունուզը առաւ: Իսկ Ռուսիա պիտի
ուզէ որ իր պատերազմական նաւատորմը անցնի Վոս-
փորէն և Տարտանսէն, բայց ուրիշ պետութիւններ այդ
իրաւունքը չվայելեն: Պիտի ուզէ Հիւսիսային Պարս-
կաստանի տիրել, և Բէքինի մէջ իր զիրքը ամուր պահել:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Մուրավիէվ
կոմսին Սպանիա եւ Ֆրանսա այցելութիւնը հաւանական
կ'ընէ մասնաւորապէս Մարոքի վերաբերեալ զանազան
ենթադրութիւնները: Հոկտեմբեր 22 ին Վիէնայէն հե-
տեւեալ կարեւոր լուրը հաղորդուեցաւ «Սթանտարտ» ի.
«Այս տեղի թերթ մը Պերլինէն կը տեղեկանայ թէ հե-
տաքերական, բայց ոչ շատ հաւատարի լուր մը կը շրջա-
գայի հոն, իբր մեկնութիւն անգլիական նաւատորմին Մի-
ջերկրականի մէջ ըրած շարժումներուն: Կ'ըսուի թէ Ռու-
սիա, Ֆրանսայի հաւանութեամբը, Սպանիայէն ստացեր
է իր Միջերկրականի նաւատորմին համար կայան մը,
որ իբր յենարան պիտի գործածուի Անգլիոյ զէմ: Կ'են-
թադրուի թէ այդ կայանը Չուլթայի նաւահանգիստը ըլ-
լալու է, Ճիպրալթարի հանդիպակաց Ափրիկեան ծով-
եզրը: Անհաւանական կը թուի որ Ֆրանսա այս կար-
գադրութեան իր հաւանութիւնը տուած ըլլայ, բայց եւ
այնպէս պատմութեանը տակը բան մը կայ:» Եւ ահա
հոկտեմբեր 31 ին «Տէլիթի Թիլէկրաֆ» այս ցնցողական
լուրը կը հաստատէ. «Ռուս կառավարութիւնը Սպա-
նիայէն գներ է, կը հաղորդէ անգլիական թերթը, Չուլթա
նաւահանգիստը որ Մարոքի թերակղզիէն դուրս կը յա-
ռաջանայ, Ճիպրալթարի նեղուցին բերանը: Այս լուրը
պաշտօնապէս պիտի ծանուցուի երբ կոմս Մուրավիէվ
Բեդրպուրի վերապահայ:» Ուրեմն սպասենք այս վե-
րադարձին:

Այս միջոցին Անգլիացիները կը քննեն, կը կշռեն
իրենց զէմ կազմուելիք երոպական դաշնակցութեան մը
հաւանականութիւնները ու անհաւանականութիւնները, և
այն եզրակացութեան կը յանգնին թէ ո՛չ Գերմանիա, ո՛չ
Աւստրիա, ո՛չ Իտալիա, ո՛չ Միացեալ-Նահանգները
ո և է հականգլիական քաղաքականութեան կը կրնան
մասնակցել:

Գերմանիոյ Վիլհելմ կայսեր իր մեծ յօրը՝ Վիլհելմ-
րիա թագուհիին՝ տալիք ժողովուրդային այցելութիւնը, Անգ-
լիոյ թէ՛ մամուլին և թէ՛ պետական անձնաւորութեանց լա-
ւատես համոզումներու արտայայտութեան առիթ կը
հայթայթէ:

Անգլիական նախարար մը, Պ. Չարլին, քանի մը
օր առաջ Մանչէսթը ճառի մը մէջ յայտարարեց թէ
«Անգլիոյ ու Գերմանիոյ միջև յարաբերութիւնները երբեք

այս աստիճան մտերմական եւ զոհացուցիչ եղած չէին:»
Թերթներն ալ մեծ նշանակութիւն կ'ընծայեն այն պարա-
գային որ կայսրը իր մեծ յօրը կ'այցելէ ճիշդ այն ամի-
սը երբ Թրանսիլաւի խնդիրը մտքերը այնքան կը յուզէ:
Անշուշտ չեն ենթադրեր թէ Գերմանիոյ կայսրը Անգլիոյ
ծրադիրներուն եւ քաղաքականութեանը վրայ ազդեցու-
թիւն մը կրնայ բանեցնել: Անգլիա իր գործը ինք կը տես-
նէ. բայց ցամաքային այն տէրութիւնները որ կ'ուզեն
Թրանսիլաւի դէպքերէն օգտուելով զէջ խաղ մը խաղալ
Անգլիոյ, այս այցելութենէն կրնան խրատուիլ: Առանց
վարանելու անգլիական մամուլը կը սպասնայ որ Անգլիա
Երբեակ Նիզակակցութեան կրնայ յարիլ եթէ երբեք ո՛ր և է
փորձ մը ըլլայ պետութեանց ոմանց կողմէն անգլիական
քաղաքականութիւնը կաշկանդելու նպատակաւ:

Գերմանիոյ մամուլը հականգլիական է, սակայն
Վիլհելմ կայսրն ու իր կառավարութիւնը անգլիասեր ուղ-
ղութեան կը հետևին: Պերլինէն շատ արժանահաւատ
աղբիւրէ մը կը հաղորդուի:

«Առ այժմ, ու զեռ այնքան երկար ատեն որքան կա-
րելի է նախատեսել, Գերմանիա — Երբեակ Նիզակակցու-
թենէն զատ — իրեն միջազգային ուղղութիւն դժած է մէկ
կողմէն Ռուսիոյ հետ բարեկամական դրացնութիւն պա-
հել, և միւս կողմէն Անգլիոյ հետ համաձայնիլ այն
անթիւ խնդիրներուն համար որոնց մասին գերմանական
տեսութիւնները և շահերը անգլիականներուն հետ պէտք է
ներդաշնակին: Եթէ Գերմանիա հակառակի Անգլիոյ կամ
Ռուսիոյ, պիտի պարտաւորուի մեծ պետութիւններէն
կախուած ունենալու անհաճելի դիրքին մէջ գտնուիլ: Հարկ
չի կայ մի առ մի ցոյց տալ թէ Գերմանիոյ անգլոփիլի-
անեան քաղաքականութեան, վաճառականութեան, դաղ-
թականութեանց համար ի՞նչ հետեւանքներ կրնայ ունենայ
Անգլիոյ զէմ Գերմանիոյ անբարեացակամ քաղաքակա-
նութիւն մը, մանաւանդ անանկ ատեն մը, երբ Անգլիոյ
ազգային զգացումը կրկնակի զգայնիկ եղած է:

«Ուստի արդի կացութեան մէջ Գերմանիոյ պետա-
կան անձերու պարտականութիւնն է Անգլիոյ հետ բա-
րեկամական յարաբերութիւններ պահել, և այս տեսակէ-
տէն պէտք է նայիլ կայսեր Անգլիա ընելիք այցելութեան
վրայ: Ասկէ զատ, միջազգային կացութեան մէջ փոփո-
խութիւն տեղի ունեցաւ: Անգլիա իր ամբողջ նաւատոր-
մը շարժուն վիճակի մէջ կը դնէ, նպատակ ունենալով
միջամտութեան ո՛ր և է գաղափար ջնջել և միեւնոյն ա-
տեն ցոյց տալ թէ իր բոլոր ուժը պատերազմին չէ դոր-
ծածուած, ու միշտ կազմ ու պատրաստ է բրիտանական
կայսրութեան իրաւունքները ամէն կողմ պաշտպանելու:»

Աւստրիա Անգլիոյ նկատմամբ շատ բարեացակամ
կ'երեւի. իսկ Իտալիա արդէն զրեթէ դաշնակից մըն է
Անգլիոյ:

Անգլիացիները կը կարծեն որ իրենց զէմ երոպա-
կան դաշնակցութիւն մը երբ կազմուի, իրենք պիտի կըր-
նան նաև վստահ ըլլալ Միացեալ-Նահանգներու աջակ-
ցութեանը վրայ: Եթէ երբեք Անգլիա շարաշար պար-

տուի եւրոպական գաշնակցութենէ մը, այնուհետեւ կարգը պիտի գայ Միացեալ-Նահանգներուն: Անկլո-սաքսոն շահերու համերաշխութենէն զատ, անկլո-սաքսոն արեւին ձայնն ալ զօրաւոր կը հնչէ:

Սակայն ո՛ր է պատահականութեան համար Անգլիա իր ամբողջ վստահութիւնը իր ուժին վրայ դրած է: Մամուլը հանրային զգացումին ճշմարիտ թարգմանն է երբ սիպարար կը գոչէ. «Մեծն Բրիտանիա կախում չունի օտարներուն ո՛չ պատապարտութենէն, ո՛չ գնահատումէն: Հանդարտօրէն ան առաջ պիտի տանի իր ուղին դէպի անխուսափելի նպատակը:»



Եւրոպայի խաղաղութեան պահպանմանը անշուշտ մեծապէս պիտի նպաստեն Ծայրագոյն-Արեւելիի դէպքերը: Երկու շաբաթէ ի վեր կարեւոր լուրեր կ'առնուին Արեւելեան-Ասիայէն: Ճարոն, Չին, Սիամ միանալով Երեւակ-նիզակակցութիւն մը կազմելու վրայ են: Երեք պետութեանց համաձայնութիւնը վերջացած կը նկատուի: Այս նոր նիզակակցութիւնը գործի պիտի սկսի եղբր անդր-սիպերեան երկաթուղիին բացումէն առաջ: Ռուսական կառավարութիւնը պարտաւորուած է իր բոլոր ուշադրութիւնը այդ կողմը դարձնել եւ զինուորական մեծ ուժ մը պահել հոն, վասնզի երբեակ-նիզակակցութիւնը նախ և առաջ Ռուսիոյ զիմադրելու նպատակաւ կը կազմուի: Այս վտանգը տեսնելով Բեղրպուրիի գահլիճը այժմ պիտի ջանայ որ Եւրոպայի կողմէ ո՛ր է կնճռոտութիւն տեղի չունենայ:

Ռուսիոյ այս նոր մտազբաղումը անշուշտ մեծապէս պիտի ազդէ Արեւելեան խնդրին վրայ ալ: Ընդհանուր կարծիք մըն էր, որուն արձագանգ եղան թայմզ եւ ուրիշ լուրջ թերթեր, թէ Ռուսիա արեւելեան խնդիրը պիտի բանայ յառաջիկայ երեք շրոտ արուան մէջ, երբ Չինաստանի կողմը կարգ մը զժուարութիւններ այլ եւս հարթած ընցուցած ըլլայ: Բայց ահա այս նոր նիզակակցութիւնը Ռուսիոյ բոլոր ծրագիրները կը յեղաշրջէ, շատ ծանր, վտանգաւոր կացութիւն մը ստեղծելով: Բեղրպուրիի իշխանութիւնը պիտի ջանայ արեւելեան խնդիրը իր արդի վիճակին մէջ պահել, անորոշ պայմանաժամով, մինչև որ ինքն իր կաշկանդումներէն ազատի: Ոչ ոք կրնայ ըսել թէ երբ պիտի հասնի այդ ժամանակը:

Էն առաջ թիւրքիան է որ այս կացութենէն պիտի օգտուի: Ռուսիոյ ո՛ր է պետութենէ վախ չունենալով թըրքական իշխանութիւնը ծայրայեղ գոհունակութիւն մը պիտի գզայ Ռուսիոյ այս առժամայ չլզոքացումէն: Սակայն Ռուսիա որքան որ ալ ձեռնպահ կը մնայ, միշտ ապագան աչքին առջեւ ունենալով իր նախնական պատրաստութիւնները շարունակ թիւրքիոյ մէջ տեսնելու վրայ է: Թեւեւ ձեռքէն չի ձգեր: Մինչեւ վերջերս ընդհանրապէս կը կարծուէր թէ Ռուսիա Հայաստանի վրայ միայն աչք ունի, ուրկէ ուղղակի Պոլսոյ ճամբան կը բացուի առ-

ջեւը և Սեւ Ծովը ամբողջապէս ռուսական լիճ մը կ'ըլլայ: Բայց ահա օրէ օր աւելի կը պարզուին Ռուսիոյ զիտաւորութիւնները Սուրիոյ վրայ, որուն շրջանակին մէջ է և Կիլիկիա: Ու ինչպէս մեր նախորդ քաղաքական տեսութեան մէջ ըսինք, Կիլիկիոյ լաւագոյն նաւահանգիստը, Ալեքսանտրէթ, երկրորդ վտար նկատուած է: Մինչ Ռուսիա Հայաստանի կողմէն իրեն դէմ Անգլիան կը տեսնէր, Սուրիոյ մէջ Գերմանիոյ և մանաւանդ Ֆրանսայի հետ մրցելու կը հարկադրուի: Չանազան դէպքեր որոնք արտաքին երեւոյթով քաղաքական ո՛ր է կարեւորութիւն ունենալ չեն թուիր, Սուրիոյ մէջ Ռուսիոյ և Ֆրանսայի փոխադարձ կասկածաբարութիւնը և խուլ հակառակութիւնը կը պարզեն: Այդ դէպքերէն մէկն է Անտիօքի պատրիարքին ընտրութիւնը: Մետրապօլիտ մը որ Ռուսիոյ մարդն էր ապօրէն կերպով Անտիօքի պատրիարքութեան կոչուեցաւ, հակառակ Ֆրանսայի ընդդիմադրութեանը: Պերութէն ալ հոկտեմբեր 30 թուականով հետագիւր մը հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ. «Ռուսական տարածումը հակակռելու նպատակաւ, Ֆրանսայի կառավարութիւնը հրահանգ տուաւ Ճիզուիթներուն մեծապէս ընդարձակել Բժշկութեան Ֆրանսական վարժարանը որուն կը նպաստէ ֆրանսական կառավարութիւնը: Այս գործին համար Ճիզուիթներուն երկու միլիոն ֆրանք պիտի տրուի, որով Պերութի բժշկական վարժարանը Եւրոպայի նմանօրինակ հաստատութեանց պիտի հաւասարի: Քննիչ Յանձնաժողովը որուն անդամներն են Բարիզի բժշկական վարժարանին ուսուցիչ Քոտնիլ և Բոզի ծերակուտականները, նոյեմբերի մէջ հոն կը սպասուին, վերանորոգումին համար պէտք եղած խորհուրդները տալու:»

Թիւրքիոյ համար Սուրիոյ կողմէն երաշխաւորութիւն մըն է Ֆրանսայի և Ռուսիոյ այս մրցումը:

Արդի կացութեան անընդհատ շարունակութեամբը թիւրքիան կրնայ տարիներու համար իր գոյութիւնը ապահովուած համարիլ: Բայց ի՞նչ պիտի ընէ այս ժամանակամիջոցին: Թիւրքիոյ բարեկամ պետութիւնները որոնց շահը կը պահանջէ օսմանեան կայսրութեան պահպանումը, գոնէ մինչեւ այն ատեն որ իրենք իրենց մէջ համաձայնութիւն մը գոյացնեն, պիտի ուզեն, պիտի յաջողին ազդել երկրին իշխանութեանը վրայ որպէս զի կարգ մը բարեկարգութեանց գործադրութեամբ կարենայ երկար ատեն ապրիլ:

Պէտք է ընդունիլ թէ Եւրոպայի մէջ հիմկուհիմա հակաթըքական ո՛ր է շարժում չի կայ: Քաղաքական աշխարհը, գործի աշխարհը թիւրքիոյ կողմը կը հակին: Եւ ուշագրաւ իրողութիւն մըն է որ հիմա Ֆրանսայի մամուլին մէջէն է միայն որ երբեմն երբեմն բորբոքեալ հոգով յօդուածներ կը տեսնուին թիւրքիոյ վէմ: Իսկ անգլիական մամուլը որ քսան տարի աշխարհ վրդրեցուց, ու վերջին տասը տարիներս ահուկի պատերազմ հրատարակեց թիւրքիոյ դէմ հայկական խնդրին առթիւ, ա՛լ բոլորովին լռակեաց է: Ո՛չ սուլթանին, ո՛չ անոր կառա-

վարութեան զէմ' ո' և է անհաճոյ քննադատութիւն կը տեսնուի: « Մեծ-Մարգասպան » ածականը անյործածելի բառերու կարգը անցած է: Արտաքին քաղաքականութեան խնդիրներուն մէջ Անգլիոյ մամուլին զինուորական կարգապահութիւնը քաջ ծանօթ ըլլալով, անոր այս լրատութիւնը քաղաքական ծրագիրներու պէտք է վերագրել:

Բայց անգլիական մամուլը իր ամբողջ լրատմամբ չէ որ լուռ կը մնայ: Մեծ թերթերէն անոնք որ ժամանակաւ շատ առաջ քաշեցին թիւրքիոյ զէմ' հիմակ ա'լ ետ չեն կրնար դառնալ, ու լուրթիւնը միակ զոհողութիւնն է զոր կրնան ընել երկրին քաղաքական շահերուն պահանջ մասնը: Բայց կան ուրիշ մեծ թերթեր ալ որոնք հայկական խնդրին էն տաք ատեններն անգամ իրենց հինաւորաց պահպանողական գծէն շատ չհեռացան, ուստի և շատ չափաւոր քննադատներ հանդիսացան միայն: Ասոնք ազատօրէն կը գրեն հիմակ ի նպաստ թիւրքիոյ, առանց վախնալու թէ անցեալ մը ուրացած կ'ըլլան: Հետեւելով այդ թերթերուն կրնանք գաղափար մը կազմել թիւրքիոյ նկատմամբ Անգլիոյ վարիչներուն ձգտումին և գիտաւորութեանց: Այդ մամուլին գլխաւոր ներկայացուցիչն է « Մորնինկ Բոսթ » մեծ թերթը, որ բարձրագոյն շրջանակներուն բերանը համարուելուն, իր գրածները ծանր կշիռ և մեծ կարեւորութիւն ունին: Այս մեր ըրածները գործնականապէս ալ հասկցնելու համար ամբողջապէս կը ներկայացնենք « Մորնինկ Բոսթ » ի հոկտեմբեր 27, ուրբաթ օրուան, խմբագրականը, ինչպէս որ մեր նախորդ թիւին մէջ ալ թարգմանած էինք ասոր բոլորովին հակառակ ուղղութեամբը գրուած յօդուած մը, զոր իւրպէս կ'օրէ հրատարակած էր « Օրօր » ի մէջ:

Ահա « Մորնինկ Բոսթ » ի խմբագրականը.

« Այս առտու կը ծանուցուի որ թիւրք կառավարութեան ու կ. Պոյսոյ քարափներու ընկերութեան միջեւ երկար ատեն ատենէ ի վեր տեսող վէճը կարգադրուեց է: Այս տեղեկութիւնը ինքնին գոհացուցիչ է. և թիւրքիոյ անգլիացի բարեկամներուն հաճելի պիտի ըլլայ տեսնել որ վերջնապէս եղած կարգադրութիւնը մեր զեռպանին առաջարկածն է: Բայց այդ լուրը գոհացուցիչ է նաեւ այն տեսակէտով որ թերեւս կրնայ նշան մը նկատուիլ Դրան կողմէն երեւան եկած բարեացակամութեան մը, ընդունելու համար բարեկամ օտարազգիներէ եղած թելադրութիւնները, և անոնց փափաքներուն համաձայնեցնելու իր որոշումները: Օտարներու մասին թիւրք պաշտօնական շրջանակներու մէջ տիրող նախանձօտ կասկածը, միանալով աններողութեանը զոր թիւրքերը ունին իրենց հաւատքէն չեղողներուն նկատմամբ, գլխաւոր պատճառը եղաւ այն խոտուութեանց և վտանգներուն որոնց գիմագրաւելու պարտաւորուեցաւ կայսրութիւնը այս վերջին տարիներս: Ով որ թիւրքիան կը ճանչնայ կ'ըմբռնէ թէ այս զգացումները զիրութեամբ չեն անհետանար. թիւրքերուն հետ դործ ունեցողը այս զգացումները եթէ արհամարհէ՝ փորձանքի կը հանդիպի: Սակայն թիւրքիոյ լուսագոյն բարեկամները միշտ յուսացած են որ ժամանակը աւելի

բանաւոր ազատամտութիւն մը պիտի զարգացնէ: Քաւիներու գործին համար ելած իրատէն կրնայ քայլ մը համարուիլ շիփլիտակ զէպի այդ ուղղութիւնը, ու երբ ասոր քոյրը գնենք նորագոյն իրատէ մը որ Հայոց կարեւոր զիջումներ կ'ընէ, կը մզուինք յուսալու որ թիւրքիոյ մէջ գործերը այնքան զէջ ըլլալու չեն որքան կ'ուզեն հատացնել իր թշնամիները: Իր հայ հպատակները արտօնուեցան Սուլթանին երկիրներուն մէջ ազատօրէն երթալ գալ: Հայկական խոտուութեանց ատեն կործանուած տուններուն վերաշինութեանը համար կառավարական օգնութիւն խոստացուեցաւ. ու միանգամայն փոխարինուութիւն մը՝ այդ տաղնապին ատեն սպանուած կամ գործէն արտաքսուած հայ պաշտօնեաններու ազգականաց, Բնակահարար թրքատեացիները պիտի արհամարհեն այս զիջումները և պիտի ըսեն թէ խոստումները երբեք պիտի չգործադրուին: Առանց խնդրին մէջ մտնելու գոնէ կարելի է ըսել թէ թիւրք կառավարութիւնը իր վերջին նոր քայլը կ'անէ առանց զրսէն ճնշումի, հետեւաբար բարեկարգութեանց գործադրութիւնը չի կրնար նկատել իբր օտարներէ իր վրայ հարկ դրուած պարտականութիւն մը որմէն ջանալու է խոյս տալ: Հայոց եղած զիջումները, և օտարազգի վաճառականներու տրուած գոհացումը նոր կարեւորութիւն մը կուտան Պաղատատի և Պասրայի երկաթուղիի խնդրին որ վերջերս շատ յուզուեցաւ: Չնանարիք այնքան մեծ է, և այնքան փոփոխութիւն պիտի մտցնէ թիւրքիոյ կայսրութեան հաղորդակցութեանցը, և, վերջապէս, կեանքին մէջ, որ գրեթէ ստոյգ է թէ սուլթանին վերայ յաճախ այնքան ազդեցիկ եղող ծայրայեղ պահպանողական թիւրքերը պիտի հակառակին ասոր: Սակայն միեւնոյն ժամանակ տարակոյս չի կայ թէ թիւրքիոյ բանակին զուլսը գտնուողները ըմբռնած են ահագին կարեւորութիւնը երկաթուղիի գծի մը որ իրենց հնարաւոր պիտի ընէ շուտով զօրաշմբեր կեդրոնացնել ո' և է կէտի վերայ որուն կը սպաննայ ոռոսական յառաջացումը: Երկաթուղիի վերջնակայանը եթէ Մարմարայի ծովուն վրայ ըլլայ, ինչ որ տեղի պիտի ունենայ գերմանական ծրագիրը ընդունուած պարագային, թշնամի նաւատորմի մը պիտի չկրնայ երբեք վնասել գծին. մինչդեռ երկաթուղին տեսակ մը շարունակութիւնը պիտի ըլլայ եւրոպական գծին, և զէպի Հնդկաստան արագ ճամբու մը մեծ առաւելութիւնը պիտի հայթայթէ Անգլիոյ: Վերջին լուրերէն կ'ըրեւի թէ թիւրք կառավարութիւնը կը փափաքի որ երկաթուղին Էնկիւրիէն զէպի հարաւային-արեւելեան ուղղութեամբ շարունակուի, բայց այն ատեն քիլոմէթրի միւլոնոյն երաշխաւորութիւնը պիտի չտրուի, եւ ասոր վերայ բանակցութիւնները զարգած են: Առայժմ յանձնախումբ մը նշանակուած է յատկազգիժը քննելու համար: Տեղեկագիրը յառաջիկայ ապրիլին կը սպասուի: Կը մնայ տեսնել թէ ինչ պիտի ըլլայ այդ տեղեկագիրը: Ինչ որ ալ ըլլայ, ոչ ոք տարակոյսի ներքեւ կը ձգէ այս մեծ ծրագրին ամէն տեսակէտներով ունեցած կարեւորութիւնը: Եթէ յաջողի՝ թիւրքիոյ անհուն զօրու-

Թին մը պիտի տայ, բայց յաջողութիւնը կամ հակառակը կատարուած ունի թիրաքիոյ հետեւելիք ընթացքէն հանդէպ իր բարեկամներուն, որոնք զրօն իրեն ուժ և աջակցութիւն հայթայթելու ցանկացող են: Այս ընթացքին թշնամական չըլլալուն նշանները տեսնելով կ'ուրախանանք:»

Այս տեսութիւնը որքան որ թիրաքիոյ նկատմամբ բարեկամական արամադրութիւններ երևան կը բերէ, բայց այդ բարեկամութիւնը պայմանադրական է: Սուլթանին կառավարութիւնը իրեն տրուած խորհուրդները մտիկ ընելով է որ Եւրոպայի բարեացակամ աշակցութիւնը պիտի վայելէ. այս ճշմարտութիւնը բացարձակօրէն կը յայտնեն նոյնիսկ թիրաքիոյ քն յետահելի պաշտպանները, որպիսին է Մարտինի Բոսք: Պաղտատի երկաթուղիին ծրարներին առթիւ Նոր Կեանքի պարզած տեսութիւնները ցոյց տուին թէ առանց հիմնական բարեկարգութեանց անկարելի է որ օտար երկիրներէ մեծամեծ գրամազուկներ յատկացուին թիրաքիոյ ճարտարագործական, առևտրական, հանրօգուտ շինութեանց ձեռնարկներու: Եւրոպացիները կարող են բարեկարգութիւնները բռնի միջոցներով ալ գործադրել տալ, քաղցրութեամբ ալ. կարելորդ միջոցը չէ, այլ նպատակը: Թիրաքիոյ աշխարհագրական դիրքը այնքան մեծ ազդեցութիւն ունի Եւրոպայի բանի մը պետութեանց կեանքին վրայ որ չեն կարող թիրաք իշխանութեան քմահաճոյքին թողուլ իրենց ապագային վճիռը:

ԶԷՅԹՈՒՆՑԻ ՏՂԱՅ ՄԸ

Մարաշէն Միս Սուլթան, որ հոն, Միացեալ-Նահանգներու Հայկական նպաստամատոյց Յանձնաժողովին ծախքով, հաստատութիւն մը կը վարէ հայ այրինքուսն և որբերուն ի նպաստ, կը գրէ.

«Ներկայ տարուան զպրոցական արձակուրդին, մեր 12 տարեկանէ վեր բոլոր տղաքը զանազան արհեստաւորներու քով գրինք, որպէսզի մէյ մէկ արհեստ սորվին և կարենան իրենց ապրուստը վաստակել երբոր զիւզենին զանան: Ասոնցմէ 26ը կօշկակար պիտի ըլլան, 20ը ստայնանկ, 16ը դերձակ, 3ը սափրիչ, 2ը վրանագործ, 2ը պարտիզդան, 5ը հիւան, 6ը անագիչ, 3ը ներկարար, 3ը հացագործ, 4ը բրուտ և 2ը հովիւ:»

«Իսկ աղջիկները առանին գործերով կը զբաղին օրն ի բուն:»

Ամերիկացի օրիորդը նաև հրատարակութեան կուտայ նամակ մը զոր որբերէն մին, Զէյթունցի տղայ մը, իրեն զրկած է: Մենք ալ կը ներկայացնենք այստեղ այդ նամակը, որուն մէջ, — մէկզի թողլով ինչ որ ստացական է և պարզապէս տեսչուհիին աչքին ազէկ երևնալու յայտնի

փափաքի մը արդիւնքը կը թուի մեզի, — ակնբեր կը տեսնուի այն ընդամին մեծ իղձը առաջ երթալու, գտնուած վիճակէն վեր բարձրանալու, զարգանալու, որ ամէն Հայու սրտին խորը բունած է և որ մեր ցեղին քն յատկանշանական յատկութիւններէն մին կը կազմէ:

Ահա նամակը նոյնութեամբ.
«Սիրելի բարեկամներ, կը փափաքեմ կեանքէս քիչ մը բան պատմել ձեզի, որովհետեւ այնչափ երախտապարտ եմ ձեզի: Երբ դեռ շատ փոքր էի, հայրս արկածի մը հանդիպելով երկու սրունքները կորսնցուց, հիւանդ ինկաւ ու մեռաւ, մայրս ալ շատ չանցած մեռաւ. այնպէս որ շատ քիչ բան կը յիշեմ իրենցմէ: Ան ատեն հօրեղբայրներէս մին իր տունը առաւ զիս, ու քիչ ետքը գործի զրկեց ուրիշ մարդու մը քով: Ես շատ փոքր ըլլալով այդ մարդուն տուած աշխատանքը չէի կրնար կատարել, ուստի ճամբեց զիս: Հօրեղբայրս աղքատ ըլլալով չէր կրնար զիս պահել, ըսաւ ինծի, ուստի ինծի ուրիշ բան չէր մնար ընել բայց եթէ Զէյթունի փողոցները հաց մուրալ: Գէշ մարդերու հետ ընկեր եղայ, ու անոնց բոլոր գէշութիւնները սորվեցայ: Երբոր հիմակ իմ անցեալիս վրայ կը մտածեմ, կը սոսկամ իմ մեղքերուս, մթութեանս և աղիտութեանս վրայ: Կ'ատկի եկեղեցին, բայց եթէ երթալու ալ ըլլայի, բան մը չէի հասկնար, բան մը չէի գիտեր Աստուծոյ կամ Հոգւոյն սրբոյ կամ սիրեցեալ Փրկչին մասին: Երբոր մէկը փորձեր ինծի խրատ տալ, վրան կը խնդայի: Ինծի կը թուի թէ վայրի գազանի մը պէս կը մեծնայի, հեղհեղաւ աւելի գէշ նալով:»

«Զէյթունի պաշարման ատեն հօրեղբայրս ուսանուեցաւ և թնդանօթի գունտ մը մեր բնակած ատնը պատին զարկաւ և պատին մէկ մասը վրաս փլաւ. շատեր կարծեցին թէ սպանուած էի, բայց երբոր զիս փրկատակներուն տակէն հանեցին, թէպէտ շատ վնասուած էի, բայց առողջացայ: Հիւանդ պառկած ատենս կը մտածէի թէ փախչելու միջոց մը չեմ կրնար գտնել և խորհեցայ թէ Մարաշ երթալու եմ, որովհետեւ իմացեր էի թէ հայ զպրոցներ կան հոն: Ուստի սաստիկ ցուրտ օր մը, երբոր ձիւնը ամէն կողմ բռնած էր, ճամբայ ինկայ, բուսիկ ու անօթի, և կիսամերկ: Ծամբան մարդ մը հանդիպեցայ. որ ինծի քիչ մը հաց տուաւ, որուն համար շնորհակալ մնացի իրեն: 12 կամ 14 ժամ ետքը Մարաշ հասայ, և հարցուցի փնտռեցի թէ ո՞ր կ'ապրէր ազնիւ տիկին Լին, գտայ և ինկրեցի որ զիս բոլորը առնէ: Մէկ քանի օր ետքը ինկրեց կատարեց, և փանջ, հոս կրակ կար, ուտելիք, հագուստ, և անանկ անուշ խօսքեր որպէս բնաւ լսած չէի առաջ: Հիմակ սորվեցայ թէ իմ վիճակս Յովսէփի վիճակին պէս էր, երբոր ան բանտէն հանուեցաւ և կառավարիչ դրուեցաւ ու պալատ մը բնակեցաւ: Կարող զրեւ սորվեցայ և այս արձակուրդի միջոցին կօշիկ շինել կը սովորիմ կոր, որովհետեւ կ'ուզեմ որ, կրցածիս չափ շուտ, ինքզինքս ապրեցնեմ և օգնեմ անոնց որոնք հիմակ այնպէս են

ինչպէս ես էի առաջ:

«Սրտանց շնորհակալ եմ ձեզի, սիրելի բարեկամներ, և ձեզի համար ամէն օր կ'աղօթեմ, որովհետև աղօթել ալ սորվեցայ, և կ'աշխատիմ Տէրն մեր Յիսուս Քրիստոսի ծառայելու, որովհետև իր սիրովը և խնամքովն է որ ասանկ բարեկամներու հանդիպեցայ:»

Չ Ա Մ Ա Ն Յ

ՔԻՉ ՍԸ ԽՂՃՍՏԱՆՔ

(Սպասաւորը Տատեան Արքիե փաշային սենեակը մտնելով կ'իմացնէ թէ Նոյրեան էֆէնտին եկած է:)

Արքիե փաշա (ընդառաջելով այցելուին) Օ՛, հրամանեցէք, Լֆէնտի, հրամանեցէք. աս ս'ր հով փչեց: Երեք տարի է որ ձեր այցելութիւնը ընդունելու պատիւը չեմ սենեցած:

Նոյրեան էֆ. (զգածեալ շեշտով). Ի՛նչ ըսէի տէ գայի, փաշա՛: Ան օրէն ի վեր որ ձեր քսանեւէին, տարուան չեզոք դիրքը ձգելով, ինծի անսպասելի մրցակից մը հանդիսացաք ազգային վարչապետութեան պաշտօնին, և յաղթեցիք ինծի, ան օրէն ի վեր ինչեք բերիք ազգին զլիւն: Ա՛ս ձեր ըրածը ի՛նչ է, փաշա՛. սիրտս շատ կոտորած է ձեր ըրած գործերուն համար: Ա՛լ վերջապէս համբերութիւնս հատաւ, ու եկայ ձեռն խնդրելու որ քիչ մը խղճմտանք ունենաք:

Արքիե փաշա (Հեզնական շեշտով) վա՛յ, սրտերնիդ իրաւ կոտորած է, Լֆէնտի: Ծա՛տ կը ցաւիմ, բայց ի՛նչ եմ ըրած որ:

Նոյրեան էֆ. (Բարշոքած). Ի՛նչ էք ըրեր. զեռ ի՛նչ պիտի ընէիք. ս'ր մէկը ըսեմ. ազդը կը մեռցնէք կը լիմցնէք կոր: Երեք տարի է պաշտօն կը վարէք, ու չէք հրամարիր, մինչդեռ Սահմանադրութիւնը երկու տարուան շրջան մը որոշած է: Ազգին նստիական օրէնքը սանակոխ կ'ընէք. պատրիարքը ուխտադրուած ընել կուտար. Սահմանադրութիւնը պարզապէս գործնական կերպով ջնջեցիք: Դեռ ի՛նչ պիտի ընէիք: Քիչ մը խղճմտանք, փաշա՛, քիչ մը խղճմտանք:

Արքիե փաշա (ապշած Նոյրեանի նայելով). Ի՛նչ, աս խօսքերը ըսողը զո՛րք էք, Նոյրեան Լֆէնտի:

Նոյրեան էֆ. (Վսեմօրէն). Ա՛յս՛, ես եմ, փաշա, ես եմ:

Արքիե փաշա (Հեզնօրէն). Սակայն դուք չէիք, Նոյրեան էֆ., որ միշտ կը յայտարարէիք թէ այս միապետական երկրին մէջ Հայոց Սահմանադրութիւնը Նորին Վեհափառութեան աչքին փուշն է: Տաճիկները կը կատողին որ

իրենց հպատակ Հայերը Սահմանադրութիւն ունենան, Ազգային ժողով զուարեն, ու իրենք իրենց Սահմանադրութիւնը չլինան գործադրել: Դուք չէիք որ միշտ կը յայտարարէիք թէ որքան ատեն որ այս Սահմանադրութիւնը գոյութիւն ունենայ և գործադրուի, երբեք Նորին Վեհափառութիւնը բարեհաճ տրամադրութիւններ պիտի չունենայ Հայոց նկատմամբ: Դուք չէիք որ ձեր պաշտօնավարութեան ատենը ձեռնարկեցիք Սահմանադրութիւնը ջնջել, և միշտ կը ցաւիք որ ժամանակ չձգեցին ձեզի այս մեծ ծառայութիւնը ազգին ընելու:

Նոյրեան էֆ. (Չայրոյթը զսպելով). Ըսէ՛ք, փաշա՛, ըսէ՛ք, ինչ որ զիտէք. ե՛ս ալ պիտի ըսեմ: Ի՛նչ մեծ ազգային ոճիր էր որ պատրիարքին գործել տուիք լա Հէյի հեռադրովը. Հայութիւնը խայտառակեցիք Երօպայի առջեւ: Ա՛հ, քիչ մը խղճմտանք, փաշա, քիչ մը խղճմտանք:

Արքիե փաշա (Հաւիտը հաւիտը նայելով Նոյրեանին). Բայց, Լֆէնտի, կարծեմ թէ դուք էիք որ 1885ին, մինչ ոչ ոք կը պահանջէր ձեռն, Յարութիւն պատրիարքին հեռագիր մը զարնել տուիք Երօպա, յայտարարելով որ Հայոց ազգը կատարելապէս երջանիկ է Նորին Կայսերական Վեհափառութեան հովանիին ներքեւ, ինչ որ շատ ճշմարիտ էր: Ու կ'ըսէիք թէ միշտ այսպէս ընելու է:

Նոյրեան էֆ. (Խոստ խոստ նայելով Տատեանին). Ծա՛տ սուր յիշողութիւն ունիք, փաշա՛: Աս ալ անցնի՛նք: Պատրիարքին թող չէք ի տար որ հայկական ինդրին վրայ բան մը խօսի զեսպաններուն. միշտ զոհութիւն յայտնել կուտար. Յարգ յօյուածին խէրը կ'անիծէք վար կը ձգէք: (Սկոռները կրճտելով). Ա՛լ քիչ մը խղճմտանք, փաշա՛, քիչ մը խղճմտանք:

Արքիե փաշա. (Ոտքի ելլելով, զողզահար). Աս ի՛նչ էք եղեր, Նոյրեան էֆէնտի, աս ինչե՛ր կը խօսիք: Դուք չէիք որ ամէն ատեն, և ամէն տեղ կը յայտարարէիք, և շատ ալ իրաւամբ, թէ ազգին համար ո՛ր և է բարիք միայն և մի միմիայն Նորին Վեհափառութեան բարեհաճ կամքին պէտք է յուսալ: Դուք չէիք որ Բարթողիմէսու եպիսկոպոսին տեղապահութեան օրովը պատրիարքարանին մէջ պոռացիք, և շատ ալ իրաւամբ, թէ վեց մեծ պետութիւնները վեց ջորի են, որ խեղճ Հայոց ազգը աւանակի պէս մէջ տեղ զնելով անոր վրայէն իրարու կից կը նետեն, ու իրենց բան մը չ'ըլար. ինչ կ'ըլլայնէ աւանակին կ'ըլլայ:

Նոյրեան էֆ. (Արհամարհանքով). Ա՛տ ալ կը յիշէք. կեցցէ՛ք, կեցցէ՛ք: Գիտութիւննիդ կատարեալ է:

Արքիե փաշա (Անհամբեր) Դեռ ուրի՛շ:

Նոյրեան էֆ. (Յաւաղին) Ո՛ր մէկը ըսեմ, փաշա՛, ս'ր մէկը ըսեմ: Կ'աղաչեմ ձեզի, ի սէր Աստուծոյ, քիչ մը խղճմտանք ունեցէք, փաշա, քիչ մը խղճմտանք:

Արքիե փաշա (յուզեալ) Բայց Նոյրեան էֆէնտի, ի՛նչ կ'ըսէք: Ահա ձեր ընթացքին կը հետեւիմ, ձեր բոլոր խորհուրդներն են որ կը գործադրեմ, ձեր ծրագիրներն են որ կ'իրականացնեմ:

Նոյրեան էֆ. (Ոտքի ելլելով. թեւերը խաչածեւ)

ծալլած, բոլոր մը շեշտակի կը նայի Տատեանի աչքերուն մէջ, ու տխուր տխուր) Այսպէս ուրեմն, փաշա՛, կ'ընդունիք թէ իմ երեւոյն տարուան գաղափարներս կ'իւրացնէք: Ե՛ս ի՛նչ պիտի ընեմ, փաշա՛, Նորին Վեհափառութեան հաճելի ծառայութիւն մատուցանելու համար: Ե՛ս ալ մեղք եմ, փաշա: Ա՛լ ինձի ընելիք բան մը չէք թողոր. բոլոր իրաւունքներս կը յափշտակէք: Քիչ մը խղճմտանք, փաշա՛, քիչ մը խղճմտանք:

Արքիւն փաշա (մեծ շունչ մը կը քաշէ, և մտերմաբար աջ ձեռքովը յուշիկ յուշիկ Նուրեան կֆէնտի ուսին կը զարնէ խնդալով)։ Հոգ մի ընէք, Նուրեան կֆէնտի, հոգ մի ընէք: Չեր մուրատին — ըհ ըհ — ձեր փափաքին կը կը հասնիք: Երսուն տարի է դուք ալ այս ազգը վայելեցիք, ուրիշներ ալ վայելեցին: Քիչիկ մըն ալ ինձի թողուցէք: Նորէն կարգը ձեզի կուգայ. ձենէ ետքը ուրիշներն ալ առնելու բաներ պիտի գտնեն: Մեր պատուական Հայոց ազգը ալիւրի պարկի կը նմանի, սրբան ալ պարպուած ըլլայ նորէն մէջէն բան մը կ'իջլէ երբոր զարնես: Քիչ մը համբերութիւն ունեցէք, Նուրեան կֆէնտի, նորէն դուք պիտի ըլլաք վաշապետ:

Նորեան էֆ. (պաղատագին) Բայց փաշա, մինչեւ երբ պիտի համբերեմ: Վախնում աչքս բաց մեռնիմ, փաշա չեղամ:

Արքիւն փաշա (հեղանկան կարեկցութեամբ, բազկատարած նայելով Նուրեանին)։ Մինչեւ որ Նորին Վեհափառութիւնը բարեհաճի հրամայել ինձի որ յոգնութիւն առնեմ: Բայց կարծեմ թէ մինչեւ մահս պաշտօնս պիտի շարունակեմ:

Նորեան էֆ. (թունալից ակնարկով մը) Սիմոն պէյն ալ այդպէս կը գուշակէր:

Արքիւն փաշա (սարսուռ մը զգալով) Ա՛:

Նորեան էֆ. (ակներեւ սփոփուած)։ Մնաք բարով, փաշա:

Արքիւն փաշա. (Միշտ սարսուռ)։ Երթաք բարով, կֆէնտի:

(Արքիւն փաշա միևնչեւ փողոցիկ դռնը ձաւորաւ կը դնէ հիւրը: Քետևաւած քեմէլլահներով իրարմէ կը բաժնուի):

ՍԿԵՊՏԻԿ

ՊԱՏՐԻԱՐՔԸ ՊԱՇՏՕՆԻՆ ՎՐԱՅ

Օրմանեան պատրիարք որ սեպտեմբեր 2 14էն ի վեր իր տունը առանձնացեալ կը մնար, սպասելով կարգ մը պահանջումներու կարգադրութեանը, հոկտեմբեր 11 23ին պատրիարքարան վերադառնալով կրկին պաշտօնին պուտը անցեր է: Այս վերադարձին մանրամասնութիւնները կը քաղենք Կ. Պոլսոյ թերթերէն:

Տատեան Արթին փաշա հոկտեմբեր 11ին (սեպտ. 29) Բերա պատրիարքին հետ տեսակցութենէ մը յետոյ Ղալաթիա իջնելով նոյն օրը գումարուած խառն ժողովին առնանպետեր է, և տեղեկութիւն տուեր է թէ Դոնէն յօտ ժամանակի մէջ Պատրիարքարանին գրաւոր պիտի հաղորդուի Հայոց ինդրանքներուն արուելիք գոհացումը: Շարաթ մը ետքը, հոկտեմբեր 6 18ին, խառն ժողովը պարձեալ կը գումարուի Արթին փաշային առնանպետութեամբ: Այդ նոտին մէջ կը կարգացուի Դոնէն խրկուած պաշտօնագիր մը, որուն վրայ երեքուկէն ժամուան խորհրդակցութենէ մը ետքը, Ժողովը երեք աշխարհական անդամէ բաղկացած պատգամաւորութիւն մը կը նշանակէ որպէս զի պատրիարքին քովը երթայ և նոյն օրուան խորհրդակցութեանց արդիւնքը հաղորդէ Միւս օրը, հինգշաբթի, պատգամաւորութիւնը իրեն յանձնուած պաշտօնը կը կատարէ: Եւ ուրբաթ օր, 8 20, պատրիարքը Երլուրդի պալատը երթալով Թահսին փաշայէն կ'ընդունուի և կը տեղեկանայ իրատէին պարունակութեանը: Կիրակի օր Մայր-Եկեղեցին բարող մը խօսելով պատրիարքը մի առ մի կը թուէ տրուած գոհացումները. ու հոկտեմբեր 11 23 ին կը վերստանան իր պաշտօնը:

Պատրիարքական քարոզով պաշտօնապէս ծանուցուած գոհացումները հետեւեալներն են, որոնք նոյնութեամբ կ'օրինակենք.

1. Ճամբորդներու երթեւեկի մասին զիւրութիւն պիտի ընծայուի: Այս զիւրութենէն պիտի օգտուին ոչ միայն թիւրքիոյ՝ այլ և արտասահմանի օսմանեան հպատակները:

2. Արձակում բանտարկեալներու որոնց 39ը Վաշէն, 10 Արաբկիրէն, 1ը Սեբաստիայէն, 1ը Տրապիզոնէն:

3. Հինգամ եկեղեցիներու նորոգութեան, ինչպէս նաեւ նոր որբանսցի մը (Գարակէօզեան կտակով կառուցանելի) հաստատման հրաման:

4. Սպարապետութեան, ծովային պաշտօնատան և թնդանօթարանի վերատեսչութեան հրահանգներ տրուեր են որպէս զի տարագրեալներու (այսինքն՝ արտաքսուած պաշտօնեաներու) անգանձելի մնացած յետնեալ զրամները զանձուին և զրկուին:

5. Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան ընդօրինակ կատարման հրաման: Ընտրական գործողութեանց ներկայ պիտի գտնուի Դատական նախարարութեան կրօնական գործերու տեսչի օգնական Պէհա պէյ, որ այս պաշտօնին համար իբատէով Ատանա պիտի երթայ:

Այս տրուած գոհացումներուն վրայ ընդարձակօրէն խօսելու պէտք չի կայ: Շօշափելի միակ կարգադրութիւնը 51 բանտարկեալի արձակումն է: Անտարակոյս ասոնք պարզապէս ոչինչ ամբաստանութիւններով ձերբակալուողներ են: Այս ժամանակի արձակումը աւելի կը ծանրացնէ մնացեալներուն վիճակը: Դիտելի է որ Պատրիարքարանին աչքերուն տակ գտնուող Պոլսոյ բանտերէն ազատուող չի կայ, և ո՛չ ալ արտարաւայրէ, բերգարգելութենէ վերադարձող:

Երթեւեկութեանց զիւրութիւնները միայն օսմանեան

Հպատակ Հայոց Համար են, որով ամբրիկեան Հպատակ Հայերը պիտի չի կարենան իրենց Հայրենիքը վերադառնալ: Բայց օսմանեան Հպատակներուն երթեւեկութեանը արուելիք գիրութիւններն ալ բազմաթիւ պայմաններու ենթարչուած են: Օրինակի Համար, ազատօրէն պիտի երթեւեկեն կասկածելի չեղողները միայն. բայց թէ ո՞վ պիտի որոշէ կասկածելի եղողը չեղողը այդ կէտը ճշգրտուած չէ: Թիւրքիոյ վարչական բարքերուն տեղեակ եղողները դիտեն թէ ուղեւորներու զլխին ինչ փորձանքներ պիտի գան:

Կիլիկիոյ կաթողիկոսին ընտրութեանը Համար տըրուած պայմանաւորեալ արտօնութիւնը բռնաբարուին և ազգային իրաւունքներուն: Իսլամ պաշտօնեայ մը պիտի նախագահէ՞ այս կրօնական զործին, և կառավարութեան ուզած անձը պիտի հոչակուի Կիլիկիոյ կաթողիկոս:

Այս դուրսը կը փակենք Տէյի Նիտզի Հետեւեալ գիտողութեամբը զոր ըրած է պատրիարքին շքուած գուհացումները ծանւցանելուն առթիւ:

«Արդարեւ ինչ որ Հայոց պատրիարքը ուզեր է ան տրուեր է:

«Ասոնք այնչափ զեղեցիկ բաներ են որ չեն կրնար ճշմարիտ ըլլալ, ու, որպէս զի մի գուցէ չկարծուի թէ իրաւ են, հոգ կը տանին մեզի իմացնելու թէ այս տնօրինութեանց գործադրութիւնը «ապագային տեղի պիտի ունենայ»: Այսպէս, իրատէին պոչը գամուած է, և թիւրքը միշտ թիւրքն է: «Չուր տեղը չէ որ թիւրք կ'անուանենք զիրենք» ըսաւ անգլիացի պառաւ զեղջիւուհի մը երբ առաջին անգամ շարժերուն լուրը առաւ: Ատ խօսքը միշտ ճշմարիտ է:

ԼՈՒՐԵՐ

ԵՒՂՈՎԻՈՅ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԸ: Անգլիական քերքերը կ'իւնացնեն քի Օրմանեան պատրիարքը արտքը վերադասնալու առթիւ սուրբանը ազատութիւն շնորհեր է այն 32 խաւաններուն որոնք ցմահ բանտարկուած էին, Եզդոկիոյ 1897ի կոտորածին պատճառաւ: Անշուշտ կը յիշուի քի այդ կոտորածը մեծ գայրոյր առաջ բերաւ Եւրոպայի մէջ: Այս եղեակագործութեան շարժառիթը մեկնելու համար և ոչ իսկ ամենաքերք պատրուակ մը գրուելէ կարելի էր: Պետութիւնները պահանջեցին յանցապարտներուն դատապարտութիւնը: Պոլսէն քննիչ յանձնաժողով մը Եզդոկիա երբայով, յետ քննութեան, եղեակագործներին մէկ քանին մահուան, և մէկ քանին ալ բանտարկութեան դատապարտեց: Քանի մը ամիս վերջը Պոլիս պատահած դէպքի մը առթիւ այս մահուան դատապարտեալներուն վճիռը փոխուեցաւ ցիւանա բանտարկութեան: Իսկ հիմակ երբ իբր քաղաքական յանցանք բանտարկուած 51 հայ բանտին կ'արձակուիին, անս այն պարզ եղեակագործներն ալ իրենց ազատութիւնը կը զրտ-

նեն: Ամեն երկրի մէջ քաղաքական յանցանքներու համար ոչ կամ կանոնաւ մոռացում մը կը նրատարակուի, իսկ պարզ մարդասպանները իրենց պատիժը ամբողջապէս կը կրեն: Անշուշտ կրնանք երեսպրէր քի այս մարդասպանները բանտին մէջ ալ նեղութիւն չէին կրեր, բայց ասոնց երկրէն հեռու մնալը միշտ ազդեցութիւն մը կ'ըներ ուրիշ խաւաններու վրայ: Հիմակ յոխորտանքով պիտի վերադասնան, և ո՞վ գիտէ ի՞նչ շարիքներ պիտի չընեն իրենց դեմ վիսայութիւն տոռողներուն: Այս է եղեր 120 հոգի սպաննողներուն պատիժը: Չմոռանալու համար իբր քաղաքական յանցանք մահուան դատապարտուած Հայերը ընդհանուր մոռացումէ չօգտուեցան: Ոչ անոնց բանտարկութիւնը պարզ ձեռակերպութիւն մը չէ:

ԴՍՍԱԼԻՔ ՄԸ. Անմեղեակ որ ատենէ մը ի վեր Բարից փրանսերէն մամուշի մէջ սուրբանին դեմ պայքար կը մղեր, և հինգ ամիս առաջ ալ Խաղաղութեան Հանձնաժողովին ատեն Ժիօն-Թիւրքերու պետ Րիզա պեյի հետ Լա Հէ երբայով հոն իր իւրաքանչեւ շաւ հաւրաւ ստացաւ, այժմ Պոլիս վերադասնալով Դոնար պաշտօն ստանձնած է: Անմեղեակ էֆենտի իբր Ժիօն-Թիւրք կը գործեր, առանց ո' և է կապ ունենալու հայ յեղափոխականներու հետ:

ՅՈՅՆ ԵԿԵՂԵՑԻՆ. Անգլիական քերքերը կը ծանուցանեն քի Կ. Պոլսոյ Գաւազ պատրիարքը և Անկիլիքան Եկեղեցիին պետը՝ Գեղարպրիի արքեպիսկոպոսը, որոնք ժամանակէ մը ի վեր քղաքակցութեան մէջ էին, համաձայներ են իրար սեղեակ պահել իրենց Եկեղեցիին գործերուն, երկու միտերը իրար մօտեցնելու նպատակով: Լուրը մեծ գոհունակութիւն առաջ բերեր է Գոյն Եկեղեցիին մէջ, կը յուսացուի որ համաձայնութիւնը պիտի ընդարձակուի, միևնչեւ որ ընդգրկէ Հասմակիան Եկեղեցիին դոնար գոհունոյ բոլոր քրիստոնէայ Եկեղեցիներուն պետերը:

ԿՐԵՏԷ. Գանեայէն լուր կը տրուի քի մէկ քանի հարիւր իսլամ ընտանիքներ, որոնք կրեւտէն գաղթած էին, խնդրալիք տուեր են իրենց տունը-տեղը վերադասնալու համար: Երկուսու իշխանը խնդրուած արտօնութիւնը շնորհեր է: Քաստուն ընտանիքը ընդհուպ Գանեա պիտի ժամանեն:

ՀԱՍՅԷ ՈՒ ԲԱԺՆԵՐԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեզին ղրկել առ
 L. FRANK,
 32, CHESTERTON ROAD,
 (ENGLAND) LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ինչ և 15 ինչ: Բաժնեզինն է Եւրոպայի Համար տարեկան 10 և վեցամսեայ 5 Քրանք, Ամերիկայի Համար տարեկան 2 և վեցամսեայ 1 տոլար: